

Պատվոյն Կոնկրետ

Բաց եղիք սիրո առաջ

Թարգմանություն ուսերենից

Բովանդակություն

[Բաց եղիր սիրո առաջ](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Ամանորյա հեքիաթ](#) (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

Առակներ

[Սրբազան կերակուր](#) (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

[Պարզապետ նայիր](#) (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

[Հույսի ժամանակը](#) (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

[Բանասերի իմաստը](#) (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

[Հոգևոր և ֆիզիկական](#) ցավ (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

[Դեպքանի հասպաղումը](#) (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

[Աստծո հետ խոսելու պատրաստակամություն](#) (թարգմանությունը՝ Մարգարիտ Սարգսյանի)

[Նայել արևին](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Հիշելու ունակություն](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Ներելու ունակություն](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Հոգևոր զարգացման](#) խարույկ (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Երջանիկների քաղաքը](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Դա հնարավոր չէ](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Ընկնելու պատճառները](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Ոչ թե ազատում, այլ գորություն](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Հիսուս պետք չէ](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Երեք բույր](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Ընդգրկված չէր կտակում](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Հրաժարում](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Հարբեցող աշակերտը](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Վախի հաղթահարում](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Երկու ասպետ](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Վերջնական անկում](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Նախնաց ոսկորները](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Հոգեզույլ երաժշտություն](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Մարդկային էության տարօրինակությունը](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Տան նորոգումը](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Զվարճասեր Նորման](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

«Գետի նման» գրքից

[Կապույտ լեռներում](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Սրին տիրապետելու արվեստի մասին](#) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Մատիտի մասին](#) (թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի)

[Որքան կարևոր է դիպլոմ ունենալը](#) (թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի)

[Խորհուրդներ լեռնային գագաթները բարձրացողներին](#) (թարգմանությունը՝ Գևորգ Հակոբյանի)

[Յոթ մահացու մեղքեր. Պատուր Կոելիոյի վարկածը](#) (թարգմանությունը՝ Մարինե Ամիրջանյանի)

[Աստված հավատում է ինձ](#) (հարցազրույց «Топ-книга» կայքում) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

[Վախենալ մահից նշանակում է գուր սեղը ժամանակ վատնել](#) (հարցազրույց «Аргументы И Факты»-ում) (թարգմանությունը՝ Նունե Մովսիսյանի)

## Բաց եղիք սիրո առաջ

Լինում են պահեր, երբ դու մեծ ցանկություն ես ունենում օգնելու նրան, ում սիրում ես, բայց ինչ-որ բան անելու անկարող ես լինում. կա՛մ իրադրությունն այնպիսին է, որ քեզ հնարավորություն չի ընձեռում մոտենալ նրան, կա՛մ էլ այդ մարդն ինքն իր մեջ ամփոփվել ու մերժում է քո կարեկցանքն ու աջակցությունը:

Նման դեպքերում մնում է ուղղակի սիրելը: Երբ ամեն ինչ թվում է անիմաստ, մենք դեռևս կարող ենք սիրել՝ չհուսալով փոխադարձ սեր, մեր նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն, չակնկալելով երախտագիտություն: Եթե դա ստացվում է, ապա սիրո էներգիան մեր շուրջն ամեն ինչ փոխում է: Սկիզբ առնելով՝ նա անպայման ինչ-որ բանի է վերափոխվում: «Ժամանակը չի փոխում մարդկանց: Կամքի ուժը չի փոխում մարդկանց: Մարդկանց վերափոխում է սերը», - ասում է Էնրի Դյումոնոդը:

Ես լրագրում կարդացել եմ բրազիլացի մի երեխայի մասին, որին ծնողները այնքան անզթորեն էին ծեծել, որ կաթված էր ստացել և կորցրել խոսելու ունակությունը:

Երեխային տեղափոխել էին հիվանդանոց, ուր նրան խնամում էր մի բուժքույր: Նա ամեն օր երեխային ասում էր. «Ես քեզ սիրում եմ»: Թեև բժիշկները վստահեցնում էին, որ երեխան ընդունակ չէ լսելու, և բոլոր ջանքերն իզուր են, բուժքույրը շարունակում էր համառել. «Ես քեզ սիրում եմ, չմոռանա՛ս այս մասին»: Երեք շաբաթ անց, երեխայի մոտ վերականգնվել է շարժվելու կարողությունը: Չորս շաբաթ անց, նա սկսել է խոսել ու ժպտալ:

Բուժքույրը հրաժարվել է պատասխանել լրագրողների հարցերին և թույլ չի տվել հրապարակել իր անունը, սակայն դիպվածը մեզ պարտադրում է երբեք չմոռանալ՝ սերն է բուժում:

Սերը կերպարանափոխում է, սերը բուժում է, բայց պատահում է, որ սերն իր ցանցն է զցում և կործանում նրանց, ովքեր որոշել են ամբողջությամբ տրվել սիրուն: Ինչքա՞ն բարդ է այս զգացմունքը, որն իրականում կյանքի շարունակության, պայքարի, կատարելության միակ իմաստն է:

Իմ կողմից անպատասխանատվություն կլինեք սիրո սահմանումներ տալու փորձ անելը. ինչպես մյուս մարդիկ, ես միայն կարող եմ զգալ սերը: Հազարավոր գրքեր են գրվել սիրո մասին, բեմադրվել ներկայացումներ և նկարահանվել կինոնկարներ, հորինվել են բանաստեղծություններ, կերտվել են քանդակներ՝ փայտից, մարմարից: Այդ ամենը, ինչին ընդունակ է արվեստագետը, սիրո մասին տալիս է ընդամենը մոտավոր պատկերացում: Ոչ ոք ի գորու չէ սիրո զգացմունքը փոխանցելու:

Սակայն ես գիտեմ, որ սերը դրսևորվում է մանրուքներում, թվացյալ քիչ նշանակալից արարքներում, այդ պատճառով սիրո մասին պետք է հիշել միշտ՝ և՛ գործելու, և՛ անգործության պարագայում:

Զանգահարի՛ր հեռախոսով և ասա՛ քնքուշ բառեր, որ զլացել ես նախկինում ասել:

Քո դուռը բաց պահիր նրանց առջև, ովքեր օգնությանդ կարիքն ունեն: Համաձայնի՛ր պաշտոն զբաղեցնել: Ազատվի՛ր պաշտոնից: Ընդունի՛ր որոշում այսօր՝ չթողնելով վաղվան: Ներողություն՝ն հայցիր այն արարքի համար, որը քեզ հանգիստ չի տալիս: Պաշտպանի՛ր սեփական իրավունքներդ: Դրամապանակդ բացի՛ր ծաղկավաճառի, ոչ թե ոսկերիչի մոտ: Երաժշտության ձայնը բարձրացրո՛ւ նրա համար, ում սիրում ես, որպեսզի նա հեռվից լսի, և չափազանց բարձր երաժշտությունը ցածրացրու, երբ նա մոտիկ է: Կարողացի՛ր ասել «այո» և «ոչ», քանզի սերը գործ ունի մարդու ամենատարբեր էներգիաների հետ: Ընտրի՛ր այնպիսի մարզաձև, որով կարելի է երկուսով զբաղվել: Մի՛ հետևիր ոչ մի դեղատոմսի, այդ թվում՝ նաև իմ կողմից տրված, քանզի սերը ստեղծագործական մոտեցում է պահանջում: Իսկ, եթե այս ամենը հնարավոր չէ, և դու միայնության մեջ ես, հիշի՛ր այս պատմությունը, որը մի անգամ ինձ պատմեց իմ ընթերցողը.

«Վարդը գորու գիշեր երագում էր ընկերանալ մեղունների հետ, բայց նրանք ոչ մի անգամ չէին իջում նրա ծաղկաթերթերի վրա: Բայց, միևնույն է, վարդը շարունակում էր երագել: Երկար գիշերները նա անըջում էր երկնքի մասին, որտեղից մեղունները մեկը մյուսի հետևից շտապում էին քնքշորեն հպվել վարդի թերթիկներին: Նրա ծաղկաթերթերը վերստին կբացվեին արևի շողերի հետ, սակայն նա չկարողացավ ապրել մինչև առավոտ:

Գիշերը, լուսինը նկատելով միայնակ վարդին, հարցրեց.

- Չե՞ս ձանձրացել սպասելուց:
- Թերևս, ձանձացել եմ: Բայց, չի կարելի, չէ՞, հանձնվել:
- Ինչո՞ւ:
- Որովհետև, եթե չբացվեմ, ապա կթռչնեմ»:

Երբ գեղեցկությանը միայնություն է սպառնում, դա պահպանելու միակ միջոցը սիրո առջև բաց մնալն է:

### **Ամանորյա հեքիաթ**

Մի հանրահայտ լեգենդ վկայում է այն մասին, որ Լիբանանի գեղատեսիլ բնության գրկում աճել են երեք մայրիներ: Ինչպես բոլորին հայտնի է, մայրիները շատ դանդաղ են աճում, և մեր երեք ծառերը դարեր անցկացրեցին՝ մտորելով կյանքի և մահվան, բնության և մարդկության մասին:

Նրանք տեսան, թե ինչպես Լիբանանի հողի վրա ոտք դրեցին Սողոմոն արքայի մարդիկ, տեսան, թե ինչպես ասորեստանցիների հետ կովի ժամանակ այդ հողն արյունով ծածկվեց: Նրանք դեմ առ դեմ հանդիպեցին երկու ոխերիմ թշնամիներին՝ Եզեկիել և Եղիա մարգարեին: Նրանց օրոք է ստեղծվել այբուբենը, ծառերը հիացել են՝ տեսնելով իրենց կողքով անցնող քարավանները, որոնք բեռնված էին բազմազույն

կտորներով: Եվ մի հիանալի օր ծառերը որոշեցին խոսել ապագայի մասին.

- Այն ամենից հետո, որ ինձ վիճակվել է տեսնել,- ասաց առաջինը,- ես կցանկանայի գահ դառնալ, որի վրա էլ կբազմի աշխարհի ամենահզոր արքան:

- Իսկ ես կուզեի մի այնպիսի բանի մաս կազմել, որը չարը բարու կփոխակերպեր դարերի համար,- ասաց երկրորդը:

- Իսկ ես,- ասաց երրորդը,- կցանկանայի, որ մարդիկ ամեն անգամ ինձ նայելով՝ Աստծուն հիշեին:

Անցան տարիներ և դարձյալ տարիներ, և վերջապես անտառում հայտնվեցին անտառահատները: Նրանք կտրեցին մայրիները և հղկեցին:

**Յուրաքանչյուր մայրի ուներ իր նվիրական երազանքը, սակայն իրականությունը մեզ երբեք չի հարցնում, թե ինչ ենք երազում:**

Առաջին մայրուց գոմ սարքեցին, իսկ նրա փայտի ավելցուկներից մտուր պատրաստեցին: Երկրորդ ծառից կոպիտ գյուղական սեղան սարքեցին, որն ավելի ուշ վաճառեցին մի կահույքավաճառի: Երրորդ ծառի փայտը վաճառել չհաջողվեց: Այն վերածեցին տախտակների և մի մեծ քաղաքի պահեստում ի պահ դրեցին:

Շատ տխրեցին մայրիները. «Մեր փայտն այնքան լավն էր, բայց ոչ մեկը չկարողացավ ըստ արժանվույն օգտագործել այն»:

Ժամանակն անցնում էր, և ահա մի անգամ աստղագարդ գիշերով մի ամուսնական զույգ, որը գիշերակաց չէր գտել, որոշեց գիշերել այն գոմում, որը պատրաստված էր առաջին մայրու փայտից:

Կինը հղի էր: Եվ այդ գիշեր որդի ունեցավ և նրան դրեց փափուկ խոտի վրա՝ մտուրի մեջ:

Հենց այդ ժամանակ էլ մայրին հասկացավ, որ իր երազանքն իրականացավ. ինքը հենարան դարձավ Երկրային Արքայի համար:

Մի քանի տարի անց հասարակ գյուղական տան մեջ մի խումբ մարդիկ նստեցին այն սեղանի շուրջ, որը պատրաստված էր երկրորդ մայրու փայտից: Եվ նախքան մարդիկ կսկսեին ուտել, նրանցից մեկը մի քանի խոսք ասաց զինու և հացի մասին, որոնք դրված էին սեղանին:

Եվ այդ ժամանակ էլ երկրորդ ծառը հասկացավ, որ այդ պահին ինքը հենարան ծառայեց ոչ միայն սեղանին դրված հացի և զինու համար, այլև կապ հաստատեց աստվածայինի և մարդկայինի միջև:

Հաջորդ օրը երրորդ մայրու երկու տախտակից խաչ սարքեցին: Մի քանի ժամ անց բերեցին վիրավոր մի մարդու և նրան գամերով ամրացրին խաչին: Երրորդ մայրին սարսափեց ճակատագրից և սկսեց անիծել իր բախտը: Բայց երեք օր էլ չէր անցել, որ

նա հասկացավ իր ճակատագիրը. մարդը, որը գամված էր խաչին, դարձավ Երկրի Լույսը: Խաչը, որը պատրաստված էր այդ մայրի փայտից, տանջանքի խորհրդանիշից վերածվեց փառաբանության խորհրդանիշի:

Այսպես որոշվեց երեք մայրիների բախտը:

**Ինչպես միշտ պատահում է երազանքների հետ, դրանք ի կատար ածվեցին, բայց բոլորովին այլ կերպ. ոչ այնպես, ինչպես պատկերացնում էին:**

## **Առակներ**

### **Սրբազան կերակուր**

Մի օր՝ առավոտյան, ուսուցիչն ու աշակերտը քայլում էին դաշտով: Աշակերտը հարցրեց, թե ինչ սննդակարգ է հարկավոր մաքրության հասնելու համար: Ճիշտ է, ուսուցիչը միշտ ասում էր, որ յուրաքանչյուր ուտեստ սրբազան է, բայց աշակերտը դրան չէր հավատում:

- Պետք է, որ լինի մի առանձնահատուկ կերակուր, որը մեզ ավելի կմոտեցնի Աստծուն:

- Լավ, հնարավոր է՝ դու ճիշտ ես: Ասենք, այ, այնտեղ աճող սնկերը,- ասաց ուսուցիչը:

Աշակերտը հուզվեց՝ մտածելով, որ սնկերն իրեն մաքրություն և լուսավորում կտան: Բայց երբ կռացավ, որ քաղի դրանցից մեկը, գոռաց.

- Սրանք թունավոր են, եթե ես սրանցից նույնիսկ մեկն ուտեմ, կմահանամ:

- Այդ դեպքում ես չգիտեմ այնպիսի կերակրատեսակ, որը քեզ այդքան շուտ կկարողանա Աստծո մոտ տանել:

### **Պարզապես նայիր**

Աշակերտն ասաց ուսուցին.

- Համարյա ողջ օրը ես մտածել եմ այնպիսի բաների մասին, որոնց մասին չարժեր մտածել, ցանկացել եմ բաներ, որոնք չարժեր ցանկանալ, կառուցել եմ ծրագրեր, որոնցից ճիշտ կլիներ նախապես հրաժարվել:

Եվ ուսուցիչն առաջարկեց նրան զբոսնել հարակից այգում: Ճանապարհին ինչ-որ բույս մատնանշելով՝ հարցրեց, թե աշակերտը գիտի, թե ինչ բույս է.

- Բելադոնա կոչվող թունավոր բույսն է,- պատասխանեց աշակերտը,- այս բույսի տերևները չի կարելի օգտագործել կերակուրի մեջ, քանի որ կարելի է թունավորվել և մահանալ:

- Բայց նրա տերևներին նայելը բոլորովին անվնաս է,- ասաց ուսուցիչը,- այդպես էլ վատ, ստոր մտքերը բոլորովին անվնաս են, եթե թույլ չտաս դրանց իրականանալ:

### **Հույսի ժամանակը**

Երկու բաբբի փորձում էին ամեն ինչ անել, որ նացիստական Գերմանիայում կարողանային ապահովել հրեաների հոգևոր անդորրը: Երկու տարի շարունակ

նրանց հաջողվում էր խուսափել հետապնդողներից և կարողանում էին կրոնական արարողություններ կատարել տարբեր համայնքներում: Ի վերջո նրանց կալանավորեցին:

Բաբբիներից մեկը, վախենալով այն ամենից, ինչ կարող է իր հետ պատահել, շարունակ աղոթում էր, մյուսը, այնուամենայնիվ, ողջ օրը քնում էր:

Վախեցած բաբբին մի օր հարցնում է.

-Ինչո՞ւ եք այդպես վարվում:

-Որպեսզի կարողանամ պահպանել իմ ուժը. գիտեմ, որ ինձ պետք է գալու:

-Մի թե՛ վախեցած չեք. մենք չգիտենք, թե մեզ ինչ կարող է պատահել:

-Ես վախենում էի այնքան ժամանակ, քանի դեռ մեզ չէին բռնել: Այժմ, երբ կալանավոր եմ, ի՞նչ իմաստ ունի վախենալ նրանից, թե ինչ կարող է պատահել: **Վախի ժամանակն ավարտվել է, այժմ հույսի ժամանակն է:**

### **Բանանների իմաստը**

Մի ճանապարհորդ որոշեց մի քանի շաբաթ անցկացնել նեապոլյան մենաստանում:

Մի օր՝ կեսօրին, մտավ մենաստանի բազմաթիվ տաճարներից մեկը և տեսավ խորանում նստած ժպտացող հոգևորականին:

-Ինչո՞ւ ես ժպտում, - հարցրեց նա:

-Որովհետև հասկացել եմ բանանների խորհուրդը, - ասաց հոգևորականը և պարկից հանեց մի հոտած բանան. - սա կյանքն է, որն անցել է անիմաստ և ոչ մի բանի պետք չի եղել, իսկ հիմա արդեն շատ ուշ է:

Հետո պարկից հանեց մի ուրիշ բանան, որը դեռևս կանաչ էր, ցույց տվեց մարդուն և հետ դրեց պարկի մեջ:

-Սա կյանքն է, որը դեռ չի սկսել իր ուղին և հարմար պահի է սպասում, - ասաց նա:

Վեջապես հանեց մի հասած բանան, կիսեց այն ճանապարհորդի հետ և ասաց.

- **Սա էլ իրական պահն է, սովորիր, թե ինչպես ապրես առանց վախենալու:**

### **Հոգևոր և ֆիզիկական ցավ**

Դժներ՝ մի ճանապարհորդ-ուսումնասիրող, մի անգամ տեսավ, թե ինչպես իր ուսուցիչը գնաց դողդոջ-անկյուն (վայր, որտեղ հավաքվում են աշակերտները) և վերադարձավ բամբուկե ձողը ձեռքին: Աշակերտներից մեկը, ով չէր կարողանում կենտրոնանալ, բարձրացրեց ձեռքը, և ուսուցիչը, մոտենալով աշակերտներին, երեք անգամ հարվածեց յուրաքանչյուրի ուսին:

Սկզբում ճանապարհորդը դա համարեց միջնադարյան բարքերի անհեթեթ մնացուկներ: Բայց ավելի ուշ հասկացավ, որ հարկավոր է հոգևոր ցավը

փոխակերպել ֆիզիկականի, որպեսզի հասկանա չարիքը, որն այն կարող է ստեղծել: Ավելի ուշ նա սովորեց այսպիսի վարժության. ամեն անգամ, երբ մտքերը դատապարտելի ընթացք էին ստանում, եղունգը ուժգին մտցնում էր ավիի մեջ՝ բուժման հիմնամասում: **Սովորաբար անարժան մտորումների հետևանքներն ավելի ուշ են երևում, սակայն երբ այնպես ենք անում, որ դրանք վերածվեն ֆիզիկական ցավի, սկսում ենք գիտակցել այն ողջ վնասը, որը մեզ պատճառում են, և հետզհետե սովորում ենք խուսափել դրանցից:**

### **Դեսպանի հապաղումը**

Ստորագրման ենթակա խաղաղարար հանձնարարականով հեռավոր երկիր էր ուղարկվել մի դեսպան: Բայց դեսպանը որոշեց օգուտ քաղել այն փաստից, որ դեռ ոչ մեկը չգիտի այն մասին, որ երկու երկրները պատրաստվում են խաղաղ դաշինք կնքել: Պատմեց իր ընկերներին գնալիք գործուղման նպատակի մասին, իսկ ընկերները, իրենց հերթին, խնդրեցին դեսպանին չշտապել: Նրանք օգտվեցին այդ տեղեկությունից, փոխեցին իրենց կոմերցիոն քաղաքականությունը և շահավետ պայմանագրեր կնքեցին:

Երբ դեսպանը վերջապես ճանապարհ ընկավ, արդեն շատ ուշ էր այն խաղաղարար հանձնարարականի համար, որը պետք է հասցներ: Պատերազմ ծագեց, որը կործանեց ինչպես դեսպանի պետության ծրագրերը, այնպես էլ այն մարդկանց ծրագրերը, որ ուշացրել էին նրան:

Ուսուցիչն ասաց.

**- Մեր կյանքում միայն մի կարևոր բան կա՝ այն է՝ ապրել սեփական ճակատագրով, այն ճակատագրով, որը կանխորոշված է հենց մեզ համար: Բայց մենք միշտ ծանրաբեռնում ենք մեզ անպետքական հոգսերով, որոնք էլ խափանում են մեր ծրագրերը:**

### **Աստծո հետ խոսելու պատրաստակամություն**

Իմաստությունն փնտրող մարդը որոշեց բարձրանալ լեռը, քանի որ նրան ասել էին, որ Աստված յուրաքանչյուր երկու տարին մեկ հայտնվում է այնտեղ: Լեռան վրա ապրելու երկու տարվա ընթացքում կերավ այն ամենը, ինչ կարող էր առաջարկել հողը: Ի վերջո, բնության ընձեռած պաշարը սպառվեց, և նա ստիպված էր վերադառնալ քաղաք:

- Աստված անարդարացի է,- գոչեց նա,- մի՞թե չգիտեր, որ ես մեկ տարի սպասել եմ, որպեսզի լսեմ Նրա ձայնը: Ես սոված եմ ու ստիպված եմ վերադառնալ քաղաք:

Այդ պահին հայտնվեց հրեշտակը.

- Աստված շատ էր ուզում խոսել քեզ հետ,- ասած հրեշտակը,- Ողջ տարին նա փորձեց քեզ: Հույս ունե՞ր, որ դրանից հետո կսկսես աճեցնել քո սեփական սնունդը:

Իսկ ի՞նչ էիր ուզում, եթե մարդն ընդունակ չէ աճեցնել պտուղ այնտեղ, որտեղ ապրում է, նա պատրաստ չէ խոսելու Աստծու հետ:



## Նայել արևին

Աշակերտը գնաց ուսուցչի մոտ և ասաց.

- Տարիներ շարունակ ես գիտակցաբար ձգտել եմ դեպի լույսը: Ձգում եմ՝ ընդհուպ մոտեցել եմ նպատակիս: Ուզում եմ իմանալ՝ ո՞րն է լինելու իմ հաջորդ քայլը:

- Ինչպե՞ս ես ապրում, ինչքա՞ն ես վաստակում,- հարցեց ուսուցիչը:

- Առայժմ չեմ վաստակում: Ինձ հայրս ու մայրս են պահում: Դե, դա այդքան էլ նշանակություն չունի:

- Դու հարցնում ես՝ որն է լինելու քո հաջորդ քա՞յլը: Կես թույլ անթարթ նայիր արևին,- ասաց ուսուցիչը:

Աշակերտն այդպես էլ արեց:

Կես թույլ անց ուսուցիչը խնդրեց, որպեսզի աշակերտը նկարագրի այն ամենը, ինչը հասցրեց տեսնել շուրջը:

- Ես ոչինչ էլ չտեսա: Արևը կուրացնում էր ինձ:

- Նա, ով միայն լույսի է ձգտում, իր պարտականությունները թողնելով ուրիշներին, երբեք չի հասնում լուսավորության:

## Հիշելու ունակություն

Ծեր, իմաստուն չինացին քայլում էր ձյունածածկ դաշտով, երբ տեսավ արտասովոր մի տարեց կնոջ:

- Ինչո՞ւ եք լալիս,- հարցրեց նա:

- Որովհետև մտաբերել եմ իմ կյանքի, երիտասարդության, գեղեցկության մասին, որ տեսել եմ հայելու մեջ, հիշել եմ այն տղամարդուն, որին սիրել եմ: Աստված դաժան է, որ մարդուն հիշելու ունակություն է տվել: Նա գիտե, որ ես հիշելու եմ իմ կյանքի զարունը և լաց եմ լինելու:

Իմաստունը կանգնել էր ձյունածածկ դաշտում և ուշադիր նայելով մի կետի՝ մտածում էր: Կինն անսպասելի դադարեց արտասվելուց:

- Ի՞նչ տեսաք այնտեղ,- հարցրեց կինը:

- Վարդերի մի դաշտ,- պատասխանեց իմաստունը: Աստված մեծահոգի է եղել իմ հանդեպ՝ օժտելով հիշելու ունակությամբ: Նա գիտե՝ ձմռանը ես զարուն կհիշեմ ու կժպտամ...

## Ներելու ունակություն

Ուսուցիչը հանդիպեց իր սիրելի աշակերտին և հարցրեց, թե ինչպես է ընթանում նրա հոգևոր զարգացումը:

Աշակերտը պատասխանեց, որ հիմա կարողանում է իր յուրաքանչյուր օրվա ամեն պահը նվիրաբերել Աստծուն:

- Եվ այսպես, հիմա այն, ինչ մնացել է. ներել թշնամուն,- ասաց ուսուցիչը:

Աշակերտը վախեցած նայեց ուսուցչին:

- Դրա անհրաժեշտությունը չկա, որովհետև ես թշնամի չունեմ:

- Ի՞նչ ես կարծում, արդյո՞ք Աստված կուզենար քեզ վնասել,- հարցրեց ուսուցիչը:

- Իհարկե՛ ոչ,- պատասխանեց աշակերտը:

- Բայց և այնպես, դու նրանից ներում ես խնդրում, այդպե՞ս չէ: Վարվի՛ր նույն կերպ և հակառակորդիդ դեպքում, եթե անգամ դու նրան ոչ մի վնաս չես տվել: Այն մարդու սիրտը, ով կարողանում է ներել, մաքուր է ու անուշ:

### **Հոգևոր զարգացման խարույկ**

Մի անգամ, երեկոյան, ուսուցիչը հանդիպեց իր աշակերտներին: Նա աշակերտներին խնդրեց խարույկ վառել, որպեսզի միասին նստեն կրակի շուրջ և գրուցեն:

- Հոգևոր ուղին նման է այս կրակին,- ասաց ուսուցիչը,- նա, ով ուզում է հոգում կրակ ունենալ, ուզած-չուզած պետք է դիմանա տհաճ ու անդուր ծխին, որից կոկորդը կսկծում է, իսկ աչքերը՝ մրմռում: Իսկ երբ կրակը սկսում է թեժանալ, ծուխն անհետանում է, շուրջբոլորը՝ լուսավորվում: Ճիշտ նույն բան է և հավատի դեպքում:

- Դե, իսկ եթե ինչ-որ մեկը նախապես խարույկ վառի՝ փրկելով մեզ տհաճ ծխի՞ց,- հարցրեց աշակերտներից մեկը:

- Նա, ով այդպես կվարվի, կեղծ ուսուցիչ է: Նա խարույկ կվառի այնտեղ, որտեղ ուզում է՝ դեկավարվելով միմիայն սեփական կամքով և ճաշակով: Ու, եթե ուզենա, ցանկացած պահի էլ կարող է հանգցնել այն: Եվ քանի որ նա ոչ մեկին չի սովորեցրել՝ ինչպես խարույկ վառեն, այդ ժամ աշխարհը խավարի մեջ կընկղմվի:

### **Երջանիկների քաղաքը**

Հին պերուական լեգենդը պատմում է մի քաղաքի մասին, ուր ապրում էին երջանիկ մարդիկ: Այս քաղաքի բնակիչները լավ էին վերաբերում միմյանց, անում էին այն ամենը, ինչն իրենց բավականություն էր պատճառում և հաճելի էր: Բոլորը երջանիկ էին, բացի քաղաքապետից, ով տխուր էր, որովհետև դեկավարելու բան չկար: Բանտը դատարկ էր, դատարանին երբեք չէին դիմում, նոտարը ոչինչ չէր անում, որովհետև այնտեղ մարդկային խոսքը ավելին էր, քան թղթի վրա գրված օրենքը:

Մի անգամ քաղաքապետը հեռու մի երկրից աշխատողների հրավիրեց՝ քաղաքի գլխավոր հրապարակի կենտրոնում ինչ որ բան կառուցելու համար: Մեկ շաբաթ շարունակ հրապարակից լսվում էին մուրճի և սղոցի ձայներ: Շաբաթվա վերջում քաղաքապետը բոլոր բնակիչներին հրավիրեց ներկա գտնվել հրապարակի հանդիսավոր բացմանը: Մեծ հանդիսավորությամբ բացվեցին հրապարակը փակող արտաքին վահանակները և մարդիկ տեսան մի կախաղան: Մարդիկ միմյանց հարցնում էին՝ ինչ գործ ունի այնտեղ կախաղանը:

Վախեցած մարդիկ սկսեցին դատարան դիմել՝ ինչ-ինչ հարցեր լուծելու համար: Հարցեր, որոնք մինչ այդ առանց դժվարության լուծում էին փոխադարձ համաձայնությամբ: Նրանք գնում էին նոտարի գրասենյակ, որպեսզի գրանցեին փաստաթղթերը, որոնց մինչ այդ փոխարինում էին պարզ մարդկային խոսքերը: Եվ նրանք օրենքից վախենալով՝ սկսեցին ուշադրություն դարձնել այն ամենին, ինչ ասում էր քաղաքապետը:

Կախաղանը երբեք չօգտագործվեց: Բայց նրա ներկայությունը փոխեց ամեն ինչ:

### **Դա հնարավոր չէ**

- Երբ դու անցնելու լինես քո ճանապարհը՝ կհանդիպես դռան, որի վրա գրություն կլինի,- ասաց ուսուցիչը,- վերադարձի՛ր ինձ մոտ և տեղեկացրու՝ ինչ է գրված այնտեղ:

Մի անգամ, մարմնի և հոգու որոնումների ճանապարհին, աշակերտը տեսավ դուռն ու վերադարձավ վարպետի մոտ:

- Այնտեղ գրված էր. «Դա հնարավոր չէ»,- տեղեկացրեց նա:

- Գրությունը պատի՞ վրա էր, թե՞ դռան,- հարցրեց ուսուցիչը:

- Դռա՛ն,- պատասխանեց աշակերտը:

- Լա՛վ, այդ դեպքում ձեռքդ դիր դռան բռնակին ու բացի՛ր այն:

Աշակերտը հնազանդվեց: Քանի որ գրությունը դռան վրա էր, ուրեմն՝ ճանապարհ էր ցույց տալիս, ինչն էլ հենց անում էր դուռը:

Երբ դուռն ամբողջովին բացվեց, գրությունն այլևս չերևաց: Եվ աշակերտը ներս մտավ:

### **Ընկնելու պատճառները**

Աֆրիկյան շամանը աշակերտի հետ գնում էր ջունգլիներով: Թեև շամանը շատ ծեր էր, բայց քայլում էր արագ, այն դեպքում, երբ երիտասարդ աշակերտը շատ անգամներ սայթաքում էր և ընկնում: Երիտասարդն ամեն անգամ ընկնելուց հետո բարձրանում էր՝ հայեռելով դավաճան գետնին, թքում էր ընկած տեղը և շարունակում հետևել իր ուսուցչին:

Երկար ճանապարհից հետո նրանք հասան սուրբ համարվող վայրին: Առանց կանգ առնելու՝ շամանը ետ դառավ:

- Դուք այսօր ինձ ոչինչ չսովորեցրիք,- հայտարարեց աշակերտը՝ հերթական անգամ ընկնելուց հետո:

- Ես քեզ ինչ որ բան սովորեցրի, սակայն դու դա չհասկացար,- ասաց շամանը: Ես փորձում եմ քեզ սովորեցնել՝ ինչպես կարելի է կյանքում հաղթահարել սխալները:

- Իսկ ինչպե՞ս պետք է վարվեմ նման դեպքերում:

- Փոխանակ անիծելու այն տեղը, որտեղ ընկել ես, պետք է առնվազն փորձես պարզել՝ ինչը ստիպեց քեզ ընկնել,- պատասխանեց շամանը:

### **Ոչ թե ազատում, այլ գորություն**

Վանահայր Ջուզեպեյն միշտ ասում էր, որ ինքը այնքան շատ է աղոթել, որ դադարել է ինչ-որ բանի մասին անհանգստանալուց. կրթերը պարտվել են:

Այս խոսքերը հասնում են Սցետեի վանքի մի իմաստունի ականջը, ով իր աշակերտների հետ հավաքվել էր երեկոյան ընթրիքի:

- Դուք լսե՞լ եք՝ ինչ են ասում: Վանահայր Ջուզեպեյի համար այլևս չկա գայթակղություն, որի դեմ ինքը պետք է պայքարի,- ասացին իմաստունին:

- Պայքարի բացակայությունից հոգին թուլանում է: Եկեք Տիրոջից խնդրենք, որպեսզի հայր Ջուզեպեյի համար գորավոր գայթակղություն ուղարկի: Եթե նա դիմակայեց գայթակղությանը, մենք կխղրենք մեկ այլը, հետո՝ մյուսը: Երբ նա վերստին սկսի պայքարել գայթակղության դեմ, մենք կաղոթենք, որ նա երբեք չասի. «Տեր, այս սատանային ինձնից հեռացրո՛ւ»:

Մենք կաղոթենք, որ դրա փոխարեն նա խնդրի. «Տեր, ինձ ուժ տուր, որպեսզի կարողանամ հաղթահարել փորձությունը»:

### **Հիսուս պետք չէ**

Մի անգամ, Սցետեի վանքի վանականներից մեկը վիրավորում է մյուսին:

Վանահայր Սիսոիսը վիրավորված վանականին խնդրում է ներել իրեն վիրավորողին:

- Ես չեմ կարող դա անել,- պատասխանում է վանականը: Նա է վիրավորել, դրա համար պետք է պատիժ կրի:

Այդ շատ կարևոր պահին, Սիսոիսը բարձրացնելով ձեռքերը դեպի երկինք՝ սկսում է աղոթել.

- Իմ Հիսուս, մենք այլևս քո կարիքը չունենք: Մենք այժմ կարող ենք ստիպել

մեղավորին՝ վճարել կատարած հանցանքների համար: Մենք այժմ կարող ենք հարցերը սեփական ուժերով լուծել և գործ ունենալ Բարու ու Չարի հետ: Հետևաբար, դու այսուհետ կարող ես մեզ հանգիստ թողնել, դրանից մենք խնդրի առաջ չենք կանգնի:

Վանականը ամոթից անմիջապես ներում է եղբորը:

### **Երեք քույր**

Շամանի մասին ավստրալիական մի այսպիսի լեգենդ կա:

Շամանը գնում էր իր երեք քույրերի հետ, երբ հանդիպեց այն ժամանակների ամենահայտնի ռազմիկներից մեկին:

- Ես ուզում եմ ամուսնանալ այս գեղեցկուհիներից մեկնումեկի հետ,- ասում է ռազմիկը:

- Եթե նրանցից մեկը ամուսնանա, մնացած երկուսը կտառապեն,- ասում է շամանը,- ես փնտրում եմ այնպիսի ցեղ, որի զինվորները կարող են ունենալ երեք կին:

Տարիներ շարունակ նրանք ճամփորդում են ավստրալիական մայրցամաքով, բայց այդպես էլ չեն կարողանում գտնել այդպիսի ցեղ:

- Ամեն դեպքում, մեզանից մեկը կարող էր երջանիկ լինել,- նկատում է քույրերից մեկը, երբ արդեն ծերացել էին և այնս չէին կարողանում քայլել:

- Ես սխալվեցի,- ասում է շամանը,- բայց արդեն չափազանց ուշ է այդ մասին խոսելը:

Եվ նա երեք քույրերին դարձնում է քարե ժայռեր, որպեսզի ով էլ որ անցնի մոտակայքով, հիշի՝ մեկի երջանկությունը ամենևին էլ չի վկայում մյուսների դժբախտության մասին:

### **Ընդգրկված չէր կտակում**

Դաշնակահար Արթուր Ռուբինշտեյնը ուշանում էր Նյու Յորքի առաջնակարգ ռեստորանում պատվիրած նախաճաշից: Ընկերներն արդեն սկսել էին անհանգստանալ, երբ վերջապես երևաց Ռուբինշտեյնը՝ տարիքով իրենից երեք անգամ փոքր մի շքեղ շիկահերի ուղեկցությամբ: Հայտնի լինելով իր՝ ոչ այնքան առատաձեռնությամբ, ի զարմանս ընկերների, Ռուբինշտեյնը պատվիրեց ամենաթանկ ուտեստը՝ սթեյքը, և շատ հազվագյուտ համարվող՝ բացառիկ համային և հոտային հատկություններով օժտված գինի:

Երբ նախաճաշն ավարտվեց, նա ժպիտով վճարեց հաշիվը:

- Ես տեսնում եմ՝ ինչպես եք բոլորդ զարմացել,- ասաց Ռուբինշտեյնը: Բանն այն է, որ այսօր ես իմ իրավաբանի մոտ էի գնացել՝ կտակ կազմելու: Ես իմ ունեցվածքը արդարացիորեն փոխանցեցի աղջկաս ու հարազատներին: Առատաձեռն եմ եղել նաև նվիրատվություններ և բարեգործություններ անելիս: Բայց հանկարծ հասկացա, որ ինքս ընդգրկված չեմ կտակում. ամեն ինչ փոխանցվել է ուրիշներին:

Այնպես որ, որոշել եմ իմ հանդեպ շոայլ լինել:

### **Հրաժարում**

- Նայիր ճանապարհով անցնող այս խոնարհ, սուրբ մարդուն,- ասաց սատանան ընկերոջը,- մտածում եմ՝ գնամ ու նվաճեմ նրա հոգին:

- Նա քեզ չի լսի, որովհետև զբաղված է միայն սուրբ բաներով,- ասաց ընկերը: Մակայն սատանան, ամեն անգամվա նման շտապելով, հագավ այնպես, ինչպես Գաբրիել հրեշտակն ու կանգնեց սուրբ մարդու առջև:

- Ես եկել եմ՝ օգեմ քեզ,- ասաց նա:

- Դուք պետք է որ ինձ շփոթած լինեք ինչ-որ մեկի հետ,- պատասխանեց սուրբ մարդը,- ես ոչինչ չեմ արել իմ կյանքում, որպեսզի արժանանամ հրեշտակի ուշադրությանը:

Եվ նա շարունակեց իր ճանապարհը, երբեք էլ չիմանալով, թե ինչից է հրաժարվել:

### **Հարբեցող աշակերտը**

Ուսուցիչն ուներ հարյուրավոր աշակերտներ: Բոլորն էլ աղոթում էին ճիշտ ժամանակին, բացի մեկից, ով հարբեցող էր:

Մահվանից առաջ ուսուցիչը իր մոտ կանչեց հարբեցող աշակերտին և նրան փոխանցեց իր բոլոր խորհուրդներն ու գաղտնիքները:

Մյուս աշակերտները տրտնջացին:

- Ինչ ամոթ: Մենք ամեն ինչ զոհաբերեցինք հանուն ուսուցչի, սակայն նա չկարողացավ գնահատել մեր որակները,- վրդովվեցին նրանք:

- Ես պետք է այդ գաղտնիքները փոխանցեի մարդու, ում լավ էի ճանաչում: Նրանք, ովքեր առաքինի են թվում, շատ հաճախ թաքցնում են իրենց դատարկությունը, հպարտությունն ու անհանդուրժողականությունը:

Այնպես որ, ես ընտրեցի այն միակ աշակերտին, ում թերությունները ես կարողացա տեսնել՝ հարբեցողինը:

### **Վախի հաղթահարում**

Հիվանդը բժշկին ասաց.

- Բժիշկ, ինձ ղեկավարում է վախը, այն խլել է իմ ուրախությունը:

- Այստեղ, իմ աշխատասենյակում մի մուկ կա, որը կրծում է իմ գրքերը,- ասաց բժիշկը: Եթե ես վախեցնեմ մկանը, այն կթաքնվի ինձնից՝ իմ կյանքը վերածելով որսի ետևից ընկնողի:

Դրա փոխարեն ես իմ լավագույն գրքերը տեղափոխել եմ ապահով մի տեղ՝ թույլ տալով մկանը կրծել մնացածը: Այսպիսով, մուկը մնում է ընդամենը մուկ, այլ ոչ թե հրեշ:

Ուշադիր եղեք ընդամենը մի քանի բաների նկատմամբ՝ ձեր վախը կենտրոնացնելով միայն դրանց վրա:

Այդ դեպքում, կարևոր հարցեր լուծելիս, դուք կխիզախեք:

### **Երկու ասպետ**

- Արի՛՜ Բարձրանանք լեռը, ուր Աստված է ապրում,- առաջարկեց ասպետն իր ընկերոջը,- ես քեզ ուզում եմ ապացուցել, որ նա գիտե միայն մեր առջև խնդիրներ դնել, Բայց ոչինչ չի անում մեր բեռը թեթևացնելու համար:

- Լա՛՛վ, իսկ ես կգնամ այնտեղ՝ հավատա մեկ անգամ ևս ի ցույց դնելու,- ասաց մյուս ասպետը:

Նրանք լեռը բարձրացան երեկոյան, և մթության մեջ լսեցին ձայն. «Ձեր նժույզները ներքևից բեռներ քարերով»:

- Տեսա՞՞ր,- ասաց առաջին ասպետը: Հերիք չի նման վերելք ենք հաղթահարում, դեռ մի բան էլ պարտադրում է ծանր բեռներ վերցնել: Ես չեմ ենթարկվի:

Երկրորդը վարվեց այնպես, ինչպես պատվիրել էր անել ձայնը: Նրանք լեռան ստորոտ հասան լուսաբացին: Արևի առաջին ճառագայթներից սկսեցին պսպղալ քարերը, որոնք բերել էր բարեպաշտ ասպետը. դրանք ադամանդներ էին:

Ուսուցիչն ասաց. «Աստծո որոշումները անմեկնելի են, Բայց դրանք միշտ ձեր օգտին են»:

### **Վերջնական անկում**

Մի չար մարդ է մեռնում: Նա դժոխքի դարպասների մոտ հանդիպում է հրեշտակին: Հրեշտակն ասում է.

- Բավական է՝ հիշես կյանքում կատարած գոնե մեկ լավ արարք. այն քեզ կօգնի: Լա՛՛վ մտածիր:

Մարդը հիշում է, որ մի անգամ անտառով անցնելիս ճանապարհին հանդիպել է սարդի և շրջանցել է, որպեսզի չտորրի: Հրեշտակը ժպտում է, և երկինքից իջնում է մի պարան՝ հնարավորություն տալով նրան դրախտ բարձրանալ:

Մարդիկ, ովքեր դատապարտված էին մնալ դժոխքում, օգտվելով առիթից, որ մոտ են կանգնած պարանին, նրա հետ սկսում են վերև բարձրանալ: Բայց մարդը սա տեսնելով՝ սկսում է վախեցնել բարձրացողներին, թե պարանը կկտրվի:

Այդ պահին պարանն իրոք կտրվում է, և մարդը կրկին հայտնվում է դժոխքում:

- Ի՞նչ ավիտու,- ասում է հրեշտակը: Անձիդ նկատմամբ ունեցած հոգատարությունը չարիքի վերածեց այն միակ լավ արարքը, որը երբևէ կատարել էիր:

### **Նախնյաց ոսկորները**

Իսպանացի մի թագավոր շատ էր հպարտանում իր ծագումով:

Մի անգամ թագավորը շքախմբով անցնում էր Արագոնի դաշտով, ուր շատ տարիներ առաջ ճակատամարտում զոհվել էր նրա հայրը: Դաշտում նրանք տեսնում են մի սուրբ մարդու՝ մարդկային ոսկորների մեծ կույտ հավաքելիս: Մոտենալով նրան՝ թագավորը հարցնում է.

- Ի՞նչ ես անում այստեղ:

- Հարգանքներիս հավաստիքը, Ձե՛րդ Մեծություն,- ասում է սուրբ մարդը: Երբ ես իմացա, որ այստեղ ժամանելու է Իսպանիայի թագավորը, որոշեցի գտնել ձեր հոր ոսկորները՝ Ձեզ հանձնելու համար: Սակայն որքան էլ փնտրեցի, չկարողացա դրանք գտնել: Ամենուրեք նույն ոսկորներն էր, լինեն դրանք ֆերմերներ և աղքատներ, մուրացկաններ և ստրուկներ:

### **Հոգեզմայլ երաժշտություն**

Մի կին գնացել էր Բրոդվեյ՝ ներկայացում դիտելու: Ընդմիջման ժամանակ նա դուրս եկավ՝ մի բան խմելու: Ճեմասրահը լիքն էր. մարդիկ ծխում էին, խոսում էին կամ խմում:

Դաշնակահարը նվագում էր, բայց ոչ մեկը ուշադրություն չէր դարձնում նրա նվագին:

Կինը խմում էր ու սովորեցնում էրաժշտին: Վերջինս կարծես ձանձրանում էր. ուղղակի իր գործն էր անում և սպասում էր, երբ պիտի ընդմիջումը ավարտվի, որ դադարեցնի նվագելը:

Երկրորդ բաժակից հետո՝ թեթևակի գինովցած կինը մոտեցավ դաշնամուրին:

- Դուք ոնց որ ասամի ցավ լինեք: Ինչո՞ւ չեք նվագում ինքներդ ձեզ համար,- բացականչեց նա:

Դաշնակահարը զարմացավ: Հետո սկսեց նվագել իր սիրած երաժշտությունը:

Մի քանի րոպե անց ճեմասրահում լռություն տիրեց: Երբ երաժշտությունն ավարտվեց՝ հիացած ծափահարություններ հնչեցին:

### **Մարդկային էության տարօրինակությունը**

Մի պարոն հարցրեց իմ բարեկամ Ջեյմ Կոենին:

- Քո կարծիքով, մարդկային էության մեջ ի՞նչն է ամենատարօրինակը:



Կռենը պատասխանեց.

- Մարդն ամեն ինչ հակառակն է անում: Շտապում է մեծանալ, իսկ հետո՝ հոգոց հանում մանկությունը հիշելիս: Կորցնում է առողջությունը հանուն փողի և անմիջապես փող ծախսում առողջությունը վերագտնելու համար:

Ապագայի մասին այնքան անհամբեր է մտածում, որ մոռանում է ներկայի մասին, այդ իսկ պատճառով չունենալով ո՛չ ներկա, ո՛չ ապագա:

Ապրում է այնպես, կարծես չի մեռնելու, և մեռնում է այնպես, կարծես երբեք չի ապրել...

### **Տան նորոգումը**

Իմ ծանոթներից մեկը, ով չէր կարողանում երազանքներն ու իրականությունը համատեղել, լուրջ ֆինանսական խնդիրներ ուներ: Եվ ամենավատն այն էր, որ գործերի մեջ ներգրավել էր սիրելի մարդկանց՝ դնելով նրանց անհարմար դրության մեջ:

Եվ, քանի որ ի վիճակի չէր վերադարձնելու կուտակված պարտքը, նա սկսել էր մտածել ինքնասպանության մասին: Մի անգամ նա անցնում էր փողոցով և տեսավ մի քանդված տուն: «Ահա, ես էլ եմ այսպիսին», - հոգոց հանեց նա: Եվ նույն պահին նրա մեջ այդ տունը նորոգելու մեծ ցանկություն առաջացավ: Նա գտավ տանտիրոջն ու առաջարկեց տունը նորոգել: Տանտերը համաձայնեց, թեև չհասկացավ, թե դրանից ինչ օգուտ իմ ծանոթին: Նրանք միասին գնեցին աղյուս, փայտանյութ, ցեմենտ: Իմ ծանոթը աշխատում էր սրտանց, ինքն էլ չիմանալով՝ ինչու և ինչի համար: Նրան թվում էր, թե տունը նորոգելու ընթացքում և իր սեփական գործերը կկարգավորվեն: Տարվա վերջին տան նորոգումն ավարտվեց, և նրա բոլոր խնդիրներն էլ լուծվեցին:

### **Զվարճասեր Նորման**

Մադրիդում ապրում է Նորմա անունով ոմն բրազիլուհի՝ իրապես ինքնատիպ մի կին: Իսպանացիները նրան անվանում են «երկաթե տատիկ»: Նա արդեն վաթսուն տարեկան է, բայց համատեղում է մի քանի աշխատատեղ և անվերջ կազմակերպում տարբեր միջոցառումներ, տոնախմբություններ, երաժշտական երեկույթներ:

Այդպիսի մի միջոցառման ժամանակ, մոտավորապես առավոտյան ժամը չորսին, երբ հոգնությունից հագիվ էի ոտքի վրա կանգնում, ես Նորմային հարցրի՝ որտեղից այդքան էներգիա:

- Ես ապրում եմ համաձայն կախարդական օրացույցի: Եթե ուզում ես, կարող եմ ցույց տալ:

Հաջորդ օրը, գնացի նրա տուն: Նա ձեռքն առավ մի հնամաշ օրացույց՝ ամբողջովին պատված խզբզոցներով:

- Եվ այսպես, այսօր այն օրն է, երբ հայտագործվել է պոլիոմելիթի դեմ շիճուկը, - ասաց նա, - պետք է նշել այս իրադարձությունը, որովհետև կյանքը հրաշալի է:

Նորման օրացույցի յուրաքանչյուր թերթիկի վրա նշել էր կարևոր որևէ իրադարձություն՝ օրվա հետ կապված: Նրա համար կյանքը առիթ էր, որպեսզի ուրախանա:

### **«Գետի նման» գրքից**

#### **Կապույտ լեռներում**

Ավստրալիա հասնելու հաջորդ օրը իմ խմբագիրն ինձ տարավ Միդնեյից ոչ հեռու գտնվող ազգային զբոսայգի: Այնտեղ՝ աչքից հեռու, անտառի մեջ, որպես հուշարձան վեր են խոյանում Կապույտ լեռներ անվամբ երեք ժայռեր:

-Սրանք երեք քույրեր են եղել,- ասաց խմբագիրը և պատմեց այսպիսի մի լեգենդ. «Մի անգամ կախարդուհին զբոսնում է երեք քույրերի հետ: Նրանց է մոտենում այն ժամանակների ամենահայտնի զինվորներից մեկն ու ասում.

-Ուզում եմ ամուսնանալ այս գեղեցկուհիներից մեկնումեկի հետ:

-Եթե նրանցից մեկը քեզ հետ ամուսնանա, մնացած երկուսը կմտածեն, որ իրենք գեղեցիկ չեն: Ես փնտրում եմ այնպիսի ցեղ, որի զինվորները կարող են ունենալ երեք կին,- ասում է կախարդուհին ու շարունակում ճանապարհը:

Տարիներ շարունակ նա ճամփորդում է ավստրալիական մայրցամաքով, բայց այդպես էլ չի կարողանում գտնել իր փնտրածը:

-Ամեն դեպքում, մեզանից մեկը կարող էր երջանիկ լինել,- նկատում է քույրերից մեկը, երբ արդեն ծերացել էին և ուժից ընկել անվերջանալի ճանապարհներից:

-Ես սխալ թույլ արեցի,- համաձայնեց կախարդուհին,- բայց արդեն ուշ է այդ մասին խոսելը:

Եվ նա երեք քույրերին դարձրեց քարե ժայռեր, որպեսզի ով էլ որ անցնի մոտակայքով, հիշի՝ մեկի երջանկությունը ամեննին էլ չի վկայում մյուսների դժբախտության մասին»:

#### **Սրին տիրապետելու արվեստի մասին**

Շատ դարեր առաջ, սամուրայների<sup>1</sup> ժամանակներում, Ճապոնիայում գրվել է սրին տիրապետելու արվեստի փիլիսոփայության մասին գիրք՝ «Գիտելիք առանց չարչարանքի» վերնագրով, որը հայտնի է նաև հեղինակի անունով՝ «Տախլանի տրակտատ»<sup>2</sup> (Տախլանը եղել է սուլեթամարտի ուսուցիչ և բուդոյայական տաճարի վանական): Ես այդ գրքից ինձ համար ընդգծումներ եմ արել:

#### **Միշտ հանգստություն պահպանի՛ր**

<sup>1</sup> Սամուրայ՝ ճապոնական ռազմա-ֆեոդալական դասին պատկանող անձ (թարգմ.)

<sup>2</sup> Տրակտատ՝ գիտական շարադրություն (թարգմ.)

Նա, ով հասկանում է կյանքի իմաստը, գիտե՝ ոչ մի բան չունի ո՛չ սկիզբ, ո՛չ ավարտ, և այդ պատճառով երբեք չի վշտանում: Նա պայքարում է այն ամենի համար, ինչին հավատում է, ջանք չի թափում որևէ մեկին որևէ բան ապացուցելու համար, լռելյայն պահպանում է հանգստությունը բավականաչափ խիզախորեն, որպեսզի կարողանա ընտրել իր ճակատագիրը:

Սա վերաբերում է թե՛ սիրուն, թե՛ կռվին:

### **Լսի՛ր սրտիդ ձայնը**

Նա, ով վստահ է իր՝ ուրիշների նկատմամբ ունեցած իշխանության վրա, համոզված է, որ միշտ կարողանում է կարևոր պահերին ասել կարևոր խոսքեր և իր մարմնի տերն է, ուրեմն խուլ է և չի լսում «իր սրտի ձայնը»: Միայն այն ժամանակ կարելի է լսել այդ «ձայնը», երբ մենք ներդաշնակ ենք ապրում շրջապատող աշխարհի հետ և ինքներս մեզ չենք դնում Տիեզերքի կենտրոնում:

Սա վերաբերում է սիրո՛ւն, կռվի՛ն:

### **Սովորի՛ր մտնել ուրիշի կերպարի մեջ**

Մենք այնքան կապված ենք ինքներս մեզ, սեփական ներաշխարհին, որ հաճախ մոռանում ենք չափազանց կարևոր բաներ. մենք անկարող ենք միայնակ իրականացնել մեր նպատակները՝ չհաղորդակցվելով ուրիշ մարդկանց հետ: Այդ իսկ պատճառով հարկավոր է ոչ միայն դիտարկել, ուսումնասիրել աշխարհը, այլ նաև փորձել հասկանալ դիմացինի զգացմունքները և կռահել նրա մտքերը:

Սա վերաբերում է սիրո՛ւն և կռվի՛ն:

### **Քեզ համար իսկակա՛ն ուսուցիչ գտիր**

Կյանքի ճանապարհին դու կհանդիպես մարդկանց, ովքեր սիրուց կամ էլ մեծամտությունից դրդված կուզենան քեզ ինչ-որ բաներ սովորեցնել: Ինչպե՞ս տարբերել բարեկամին կավատից: Պատասխանն ավելի քան պարզ է. իսկական ուսուցիչը երբեք չի խոսում իդեալական ճանապարհի մասին, այլ աշակերտին առաջարկում է բազմաթիվ արահետներ, որոնք տանում են դեպի ճանապարհ՝ մայրուղի, որի վերջում էլ քո ճակատագիրն է: Այն պահից սկսած, երբ դու կգտնես քո ճանապարհը, քեզ այլևս ուսուցիչ հարկավոր չէ. այդ պահից սկսած բոլոր դժվարությունները և ճանապարհի բոլոր արգելքները քոն են, բացարձակապես միայն քոնը:

Սա ո՛չ սիրուն, ո՛չ կռվին չի վերաբերում, բայց, եթե չհետևես այս խորհրդին, դու ընդհանրապես ոչնչի չես հասնի:

### **Խուսափի՛ր վտանգից**

Շատերը մտածում են, որ կյանքում հարկավոր է զոհողությունների գնալ հանուն երազանքի իրագործման, սակայն իրականում այս տեսակետը ավելի քան խաբուսիկ է: Որպեսզի հասցնենք իրականացնել երազանքները, հարկավոր է պահպանել կյանքը և խուսափել վտանգներից: Որքան շատ ենք մենք խորհում մեր կատարելիք քայլերի մասին, այնքան սխալվելու հավանականությունը մեծանում է, որովհետև մենք ուշադրություն չենք դարձնում մարդկանց վերաբերմունքին, արարքներին, մոռանում ենք դասեր քաղել կյանքից, հաշվի չենք առնում այս ամենը՝ կրքի մեջ հայտնվելով, հաշվի չենք առնում նաև, երբ փոխվում է իրադրությունը: Որքան շատ

ենք մենք վստահ, որ տիրապետում ենք իրավիճակին, այնքան քիչ է հավանականությունը, որ մենք իսկապես տիրապետում ենք նրան: Վտանգը գալիս է առանց նախագուշացման, իսկ արագ հակազդումը պարզապես չի կարող նախօրոք ծրագրված լինել, ինչպես կիրակնօրյա զբոսանքը: Դրա համար, եթե դու իսկապես ուզում ես հասնել ներդաշնակության սիրո մեջ կամ էլ մարտարվեստում, ապա քո մեջ նախապես ձևավորիր արագ հակազդում (ռեակցիա): Գրագե՛տ պահիր քեզ և թույլ մի՛ տուր քո՝ այսպես կոչված կյանքի փորձը, քեզ դարձնի մեքենա: Այդ փորձին դիմիր «սրտիդ ձայնին» լսելուց հետո միայն: Եթե անգամ քեզ թվում է, որ այդ ձայնը քեզ ասում է ոչ այն, ինչ կուզեիր լսել, միևնույնն է, լսի՛ր նրան՝ քո սրտի ձայնին. նա ավելի լավ գիտե, երբ է հարկավոր գործել, երբ մի կողմ քաշվել:

Սա գործում է թե՛ սիրո մեջ և թե՛ կռվի դեպքում:

### Մատիտի մասին<sup>3</sup>

Փոքրիկը նայում է, թե տատիկն ինչպես է նամակ գրում և հարցնում է.

- Դու գրում ես, թե մեզ ինչ էր եղե՞լ: Իսկ կարող է իմ մասի՞ն ես գրում:

Տատիկը դադարում է գրելուց, ժպտում թոռնիկին ու ասում.

- Կռահեցիր, քո մասին եմ գրում: Բայց ավելի կարևոր է ոչ թե այն, ինչ գրում եմ, այլ այն, թե ինչով եմ գրում: Կցանկանայի, որ դու, երբ մեծանաս, այս մատիտի նման լինես:

Փոքրիկը հետաքրքրասիրությամբ մատիտին է նայում, բայց առանձնահատուկ ոչինչ չի նկատում:

- Սա ճիշտ այնպիսին է, ինչ բոլոր այն մատիտները, որ տեսել եմ:

- Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես ես իրերին նայում: Այս մատիտն օժտված է հինգ հատկություններով, որոնք քեզ անհրաժեշտ են, եթե ցանկանում ես ամբողջ աշխարհի հետ հաշտ ապրել:

Առաջինը՝ դու կարող ես հանճար լինել, բայց երբեք չպետք է մոռանաս **Ուղղորդող ձեռքի** գոյության մասին: Այդ ձեռքն անվանում ենք Աստված և մեզ պետք է միշտ Նրա կամքին վստահենք:

Երկրորդ՝ ժամանակ առ ժամանակ հարկ է լինում մատիտը սրել, որ գրի: Այդ գործողությունը նրա համար մի քիչ ցավոտ է, բայց փոխարենը դրանից հետո ավելի նուրբ է գրում: Հետևաբար, ցավին կարողացիր դիմանալ՝ հիշելով, որ այն վսեմացնում է քեզ:

Երրորդ՝ եթե մատիտ ես օգտագործում, միշտ կարող ես ռետինով ջնջել այն, ինչ սխալ ես համարում: Հիշիր, որ ինքն իրեն ուղղելը միշտ չէ, որ վատ է: Դա հաճախ ճիշտ ճանապարհին մնալու միակ միջոցն է:

<sup>3</sup> Թարգմանությունը նվիրվում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի 2010թ. շրջանավարներին:

Չորրորդ՝ մատիտի մեջ կարևորը ոչ թե փայտն է, ինչից պատրաստված է, և ոչ էլ ձևը, այլ նրա ներսի գրաֆիտը: Այդ պատճառով միշտ մտածիր, թե ինչ է կատարվում քո ներսում:

Եվ վերջապես հինգերորդ՝ **մատիտը միշտ իրենից հետո հետք է թողնում:** Նույն ձևով էլ դու ես քո հետևից հետք թողնում քո արարքներով, և այդ պատճառով լավ կշռադատիր յուրաքանչյուր քայլդ:

### Որքան կարևոր է դիպլոմ ունենալը

Իմ հին ջրաղացը հարևան ագարակից առանձնացված է ծառերի շարքով: Մի անգամ այնտեղից ինձ մոտ եկավ հարևանս: Մինչ այդ հաճախ էի նրան տեսնում դաշտում՝ կնոջ հետ և ամեն անգամ մտածում էի, որ նրանց տարիքում, իսկ նրանք յոթանասունին մոտ կլինեին, հանգստանալու ժամանակն է:

Ծերունին, որը մինչ այդ ինձ համակրելի էր, սկսեց բողոքել, որ իմ ծառերի չորացած տերևները թափվում իր տանիքին և պահանջեց կտրել ծառերը:

Ես շշմած էի. մարդը, որ ամբողջ կյանքը բնության հետ համերաշխ ապրել է, պահանջում է, որ կտրեմ այդքան դժվարությամբ մեծացրած ծառերը միայն այն բանի համար, որ մի տասը տարի հետո նրա տանիքի ծածկը կարող է փչանալ:

Նրան հրավիրում եմ սուրճի: Ասում եմ, եթե քամուց քշված չոր տերևները վնաս պատճառեն նրա տանիքի ծածկին, ապա ես իմ միջոցներով կփոխեմ ամբողջ ծածկը: Հարևանը պատասխանում է, որ դրա հետ համաձայն չէ, և պնդում է, որ ծառերը կտրեմ: Սկսում եմ զայրանալ. ասում եմ, որ կգերադասեմ գնել նրա ագարակը:

- Իմ հողը չի վաճառվում,- հակառակվում է նա:

- Բայց այդ գումարով, որ ես պատրաստ եմ վճարել, կարող եք քաղաքում մի հիանալի տուն գնել, որտեղ էլ Ձեր տիկնոջ հետ առոք-փառոք կապրեք մինչև ձեր օրերի վերջը՝ առանց հոգ տանելու, թե ինչպես պետք է անցկացնեք իստաշունչ ձմեռը, և առանց մտահոգվելու բերքի մասին:

- Իմ ագարակը չի վաճառվում: Ես այստեղ ծնվել, մեծացել եմ, և, ընդհանրապես, ես շատ ծեր եմ տեղափոխության համար:

Նա առաջարկում է քաղաքից ունեցվածքային վեճերի փորձագետ հրավիրել, որպեսզի նա կողմնորոշվի ստեղծված իրավիճակում և որոշում կայացնի, և ավելացնում է, որ չարժե չարանալ միմյանց վրա, քանի որ հարևաններ ենք:

Նրա գնալուց հետո իմ առաջին պորթկումը նրան մայր հողի նկատմամբ անհոգի ու անտարբեր վերաբերմունքի համար մեղադրելն էր: Բայց հետո սկսում եմ մտածել, թե ինչու նա չցանկացավ վաճառել ագարակը: Եվ շուտով գտնում եմ պատասխանը՝ հարևանիս կյանքը միայն մի պատմություն ունի, որը նա չի ցանկանում փոխել: Նրա համար քաղաք տեղափոխվելը կնշանակեր խորասուզվել մի ուրիշ, անծանոթ

աշխարհ, ուրիշ արժեքներով, որոնք այդ տարիքում նա հույս չուներ յուրացնելու:

Բնավորության այդ առանձնահատկությունը միայն իմ հարևանն ունի: Ամեննին: Կարծում եմ, որ բոլոր մարդիկ են այդպիսին: Մենք հաճախ այնպես ենք կապվում մեր ապրելու կերպին, որ պատրաստ ենք մերժելու հիանալի հնարավորությունը, քանի որ չգիտենք դրանից օգտվելը: Ինչ վերաբերում է հարևանիս, ապա նրա ազարակը և գյուղը նրան միակ ծանոթ վայրերն են, և այդտեղից հեռանալը նրա համար կնշանակեր մեծ ռիսկի դիմել: Քաղաքի բնակիչներն էլ համարում են, որ մարդը պետք է դիպվում ունենա, ամուսնանա, երեխաներ դաստիարակի, հոգ տանի, որ նրանք էլ դիպվում ունենան և այդպես շարունակ:

Ոչ ոք հարց չի տալիս.«Իսկ հնարավոր է այլ կերպ ապրել»:

Հիշում եմ մի վարսավիրի, որ գիշեր-ցերեկ աշխատում էր, որպեսզի աղջիկը սոցիոլոգի դիպվում ստանա: Նա համալսարանը ավարտել կարողացավ և երկար փնտրտուքից հետո որպես քարտուղարուհի աշխատանքի տեղավորվեց ցեմենտ արտադրող ֆիրմայում: Եվ նույնիսկ դրանց հետո էլ վարսավիրը հպատությամբ կրկնում էր. «Աղջիկս սոցիոլոգի դիպվում ունի»:

Իմ ծանոթներից շատերը և իմ ծանոթների երեխաներից շատերն էլ դիպվում ունեն: Բայց դա չի նշանակում, որ նրանք աշխատում են իրենց մասնագիտությամբ՝ ճիշտ հակառակը. նրանք ընդունվել և ավարտել են համալսարաններից որևէ մեկը, որովհետև այն ժամանակ այդ համալսարանը համարվում էր հարգի, և նրանց ինչ-որ մեկը ներշնչել էր, որ առանց դիպվումի կյանքում կարգին տեղավորվել հնարավոր չէ:

Արդյունքում չկան լավ այգեգործներ, հացթուխներ, անտիկվարներ, քանդակագործներ: Գուցե եկել է դիպվումների նկատմամբ մեր վերաբերմունքը վերանայելու ժամանակը:

Բժիշկները, ինժեներները, գիտնականները, իրավաբանները պետք է համալսարան ավարտեն, բայց արդյո՞ք պետք է բոլորը ձգտեն բարձրագույն կրթություն ստանալու: Պատասխանի փոխարեն Ռոբերտ Ֆրոստի բանաստեղծությունից մեջբերում անեմ.

*Իմ առաջ երկու ճանապարհ բացվեց:  
Ընտրեցի այն, որը խոտով էր ծածկված:  
Տարբերությունը դա էր միայն:*

Հ.Գ. Որպեսզի վերջացնեմ հարևանիս հետ կապված պատմությունը, հայտնում եմ. փորձագետը եկավ և ինձ ցույց տվեց ֆրանսիական մի օրենք, որը պարտադրում էր, ծառերը հարևանի տարածքին երեք մետրից մոտ չտնկել:  
Իմ ծառերը երկու մետրի էին հեռու: Ստիպված էի ծառերը կտրել:

### **Խորհուրդներ լեռնային գագաթները բարձրացողներին**

Ընտրիք հարմար լեռնային բարձունք: Ընդ որում շատ էլ ուշադրություն մի դարձրու, թե ինչ են ասում ուրիշները՝ «այս գագաթը գեղեցիկ է», «սա բարձրանալը հեշտ է»: Դու շատ էնտուզիազմ ու էներգիա ես ծախսելու նպատակին հասնելու համար, այդ պատճառով էլ որոշումը ինքնուրույն ընդունիր՝ քեզ վրա վերցնելով նախաձեռնության ամբողջ պատասխանատվությունը:

**Հետաքրքրվիր, թե ինչպես դրան մոտենաս:** Հաճախ լեռը երևում է հեռվից: Այն թվում է հիասքանչ, գերող, շատ հետաքրքրություններ խոստացող: Եվ ահա մոտենում ենք նրան, ու պարզվում է, որ շրջափակված է ճանապարհներով, քոն լեռան միջև հանկարծ անանցանելի անտառ է հայտնվում, և իրականում պետք է լուրջ դժվարություններ հաղթահարել այնտեղ, որտեղ քարտեզի վրա ամեն ինչ հարթ է:

Այդ պատճառով նախօրոք հետազոտիր բոլոր ճանապարհները, բոլոր արահետները, որպեսզի մի սքանչելի օր լեռան ստորոտում հայտնվելով՝ պատրաստ լինես գագաթը նվաճելուն:

**Խորհրդակցիր այն մարդկանց հետ, որ արդեն անցել են այդ ճանապարհը:**

Քեզ համարիք այդ ճանապարհով առաջին անցնողը, բայց ամեն դեպքում մի՛ անտեսիր այն մարդկանց խորհուրդները, ովքեր արդեն իրականացրել են այդ երազանքը: Հնարավոր է, որ նրանք կարողանան հեշտացնել քո վերելքը՝ հուշելով, թե որ տեղերն են ավելի վստահելի պարանն ամրացնելու համար, որ արահետով գնաս, որ խուսափես անախորժություններից: Այո, ինքդ պիտի է մագլցես, և հաջողությունն ամբողջությամբ քեզանից է կախված, բայց չարժե անտեսել նախորդների փորձը:

**Վտանգները հաղթահարելի են, եթե դրանք մոտիկից ես տեսնում:**

Երբ սկսում ես երազանքներիդ բարձունքի նվաճումը, մի՛ մոռացիր քեզ սպառնացող վտանգների մասին: Հասկանալի է, որ ճանապարհին կարող են հանդիպել զառիվայրեր, համարյա աննկատելի ծերպեր, քամուց հղկված այնպիսի քարեր, որոնց վրայով, սառույցի նման, ոտքը սահում է: Բայց, եթե ուշադիր լինես, թե ուր ես դնում ոտքդ, ապա ժամանակին կնատես վտանգը և կխուսափես դրանից:

**Տեսարանները փոխվում են, այդ պատճառով էլ, մի՛ շտապիր:** Իհարկե, միշտ պետք է հիշես նպատակը՝ հասնել գագաթին: Բայց վերելքի հետ շատ հետաքրքրիր տեսարաններ են բացվում, և վատ չէր լինի մի բույս կանգ առնել և հիանալ նոր տեսարանով: Նվաճած յուրաքանչյուր մետրի հետ քո առջև նորանոր տարածություններ են բացվում: Օգտվիր հնարավորությունից, որպեսզի քեզ համար նոր բացահայտումներ անես:

**Հաշվի առ օրգանիզմիդ հնարավորությունները:** Միայն նա կարող է նվաճել գագաթը, ով խնայողաբար է վերաբերվում իր մարմնին: Տրամադրությանդ տակ է այն ժամանակը, որ հատկացված է մինչև կյանքիդ վերջը, այդ պատճառով քո օրգանիզմից մի՛ պահանջիր այն, ինչը քո ուժերից վեր է: Եթե չափազանց արագ գնաս, ապա շուտ կհոգնես և ստիպված կլինես վերադառնալ կես ճանապարհից: Եթե վերելքը չափից դուրս դանդաղ լինի, ապա գիշերը վրա կհասնի,

և հնարավոր է շեղվես ճանապարհից: Հիացիր տեսարաններով, վայելիր լեռնային աղբյուրների ջուրը և պտուղները, որով առատորեն հյուրասիրում է բնությունը, բայց կանգ մի՛ առ, շարունակիր վերելքը:

**Մի՛ մոռացիր հոգու մասին:** Պետք չէ անընդհատ կրկնել. «Կհասնեմ»: Հոգիդ առանց այդ էլ գիտի դրա մասին: Նրան թույլ տուր օգտվել երկարատև վերելքից, որպեսզի աճի, հորիզոնին ձուլվի, երկինք բարձրանա: Կլանվածությունը ոչնչով չի օգնի նպատակին հասնելու գործում, փոխարենը կզրկի վերելքից հաճույք ստանալուց: Բայց կցանկանայի զգուշացնել մյուս ծայրահեղությունից. եթե անընդհատ կրկնես. «Սա ավելի դժվար է, քան կարծում էի», ապա ոգուդ ուժը կմարի:

**Պատրաստ եղիր լրացուցիչ կիլոմետրը քայլելուն:** Պարզվում է՝ գազաթ տանող ճանապարհը միշտ ավելի երկար է, քան կարծում էիր: Չկասկածես, ինչ-որ պահի շատ հեռու է թվալու այն, ինչին, թվում էր, ձեռքդ հասնում է: Բայց եթե հենց սկզբից տրամադրվել էիր երկար ճանապարհ անցնելուն, այդ բացահայտումը տրամադրությունդ չի գցի:

**Հասնելով գազաթին՝ ազատություն տուր ուրախությանդ:** Լաց եղիր, ծափ տուր, գոռա բոլոր ուղղություններով, որ հասել ես գազաթին, թույլ տուր, որ քամին (իսկ գազաթին միշտ քամի լինում է) մաքրի մտքերդ, թարմացրու հոգնած ու քրտնած ոտքերդ, լայն բացիր աչքերդ, սրտիցդ թափ տուր փոշին: Ի՛նչ ուրախություն: Այն, ինչը առաջ միայն երազանք էր, աղոտ տեսիլք, արդեն մտավ քո կյանքը: Նվաճեցի՛ր:

**Խոսք տուր:** Օգտվիր նրանից, որ քո մեջ նոր ուժ ես հայտնաբերել, որի մասին չէիր էլ մտածում, և խոսք տուր, որ նրանից չես բաժանվի մինչև կյանքիդ վերջը:

Վատ չէր լինի խոսք տայիր, որ մի գազաթ էլ կնվաճես և կգնաս նոր արկածներ փնտրելու:

**Վերելքիդ մասին պատմիր ուրիշներին:** Այո, պատմիր այդ մասին: Օրինակ եղիր ուրիշների համար: Թող բոլորն իմանան, որ դահնարավոր է: Թող ուրիշներն էլ լցվեն համարձակությամբ և գրավեն իրենց սեփական բարձունքները:

### **Յոթ մահացու մեղքեր. Պատու Վռելիքի վարկածը**

Յոթ մահացու մեղքերը (սկզբում ութն էին) քրիստոնեության արշալույսին ձևակերպել է հույն քահանա Եվագրիոս Պոնտացին՝ թվարկելով մարդուն բնորոշ և նրան անշեղորեն դեպի դժոխք տանող հիմնական վատ հակումները (հետաքրքիր է, որ այդ ցուցակի պատվավոր տեղում է որկրամոլությունը): 6-րդ դարում Գրիգորիս Մեծ պապն այդ ցանկում խմբագրում արեց՝ փոխելով տխրությունը նախանձով և գոռոզությունը սնամիտության հետ միավորելով: 17-րդ դարում ցուցակը նորից ենթարկվեց փոփոխության, և մեղանաղձոտությունը դադարեց մեղք համարվելուց, նրան փոխարինեց ծուլությունը: Եվ այսպես մեր առջև «հիմնական ցուցակն» է:

**Առաջին մեղքը՝ գոռոզություն**



Ըստ բառարանի դա իգական սեռի<sup>4</sup> գոյական է: Հումանիշներն են մեծամտությունը, ամբարտավանությունը, ինքնահավանությունը:

Համաձայն կաթոլիկ եկեղեցու ուսմունքի՝ դա ինքն իր համդեպ բոլոր սահմաններն անցնող սերն է, որը բարձր է դասվում Աստծո համդեպ սիրուց: Դա հակասում է առաջին պատվիրանին («սիրիր Աստծուն քո ամբողջ սրտով, և քո ամբողջ հոգով, և քո ողջ գիտակցությամբ») և հրեշտակների ըմբոստության և Լյուցիֆերի անկման պատճառը եղավ:

Բուդդայական առակի համաձայն մեծն քահանայապետ Տոֆուկուն նկատել է, որ եկեղեցում հիվանդագին աշխուժություն է վանականները դես ու դեն են վազվզում, քահանաները շարք են կանգնել՝ պատրաստվելով ինչ-որ կարևոր հյուրի ընդունելու:

- Ի՞նչ է պատահել,- հետաքրքրվել է նա:

Նրան մի զինվորական է մոտեցել և մի երկտող մեկնել, որտեղ գրված էր. «Կիտազակին՝ Կիտոտ քաղաքի նահանգապետը, հենց նոր մոտեցել է մենաստանի դարպասներին և խնդրում է իրեն ընդունել»:

- Այդ մարդու հետ խոսելու բան չունեմ,- պատասխանել է քահանայապետը:

Մի քանի րոպե անց հայտնվեց ինքը՝ նահանգապետը, ներողություն խնդրեց, երկտողի մեջ ինչ-որ բան ջնջեց և նորից տվեց քահանայապետին: Այնտեղ գրված էր. «Կիտազակին խնդրում է իրեն ընդունել»:

- Բարի՛ գալուստ,- պատասխանեց Տոֆուկուն:

2003 թվականի մայիսի 1-ին, երբ նախագահ Բուշը հայտարարեց Իրաքում խոշոր զինվորական գործողությունների ավարտի մասին, «Լինկոլն» ավիատարի վրա կախված էր «Հանձնարարությունը կատարված է» ցուցանակը: Ձուկած ամերիկացի զինվորների թիվն այդ օրը կազմում էր 217 մարդ: Այն օրը, երբ գրում եմ այս տողերը, նրանց թիվն անցնում է 2700-ից:

Ըստ բաբբի Ադին Շթեյնզալտցի՝ «երբ ինչ-որ մեկն ուզում է հասկանալ՝ ով է ինքն իրականում՝ որպես համեմատության աստիճան օգտագործելով երկրորդական բաներ, ապա միայն դատարկ ինքնիների մի խումբ է գտնում, որոնք կախված են մեկը մյուսից և միայն այդ դեպքում են իմաստ ստանում»:

«Միսալ է իրեն բնորոշելը որպես ինչ-որ մեկի ընկեր, ինչ-որ պաշտոն ունեցող մեկի որդի, այս ու այն պարտականությունները կատարող»։ Քանի որ այն ամենը, ինչ կարողանում ենք որոշել այդ եղանակով, հենց մեր սահմաններն են որպես կանոն, ոչ ամբողջական և անորոշ սահմաններ, եթե մեկը փորձի ուրիշների հաշվին դա տեսանելի դարձնել»:

«Միակ հնարավոր հարաբերությունը Աստծո հետ հարաբերությունն է, և այդ դեպքում ամեն ինչ իմաստ է ստանում, իսկ մենք բացվում ենք բարձրագույն գաղափարին հասնելու համար»։ Ըստ Սուրբ Սվզուստինի՝ մեծամտությունը վեհությունն է, այլ սնասպարծություն: Գոռոզությամբ լցված՝ այն մեծ է թվում, բայց իրականում հիվանդությունն է:

<sup>4</sup> Կան լեզուներ (այդ թվում՝ պորտուգալերենը, ռուսերենը), որոնց գոյականները ձևով բաժանվում են սեռերի՝ արական, իգական, չեզոք (ծանոթ. խմբագրի):

Խորհուրդներ «Դատ Դե Յզին» գրքից.

Ավելի լավ է բաժակը մինչև վերջ չլցնել, քան փորձել այն տանել՝ չթափելով:

Չափից դուրս սրված սայրը դյուրաբեկ է լինում:

Երբ սրահը ոսկով ու նեֆրիտով է լցվում, ապա նա, ով տիրում է դրանց, չի կարող իր անվտանգությունն ապահովել:

Երբ հարստությունն ու մեծարանքը մեծամտության են հանգեցնում, դրան անպայման չարիքն է հետևում:

Երբ կատարում ենք մեր աշխատանքը, ու մեր անունը սկսում է փառաբանվել, իմաստությունն այն է, որ սովերում մնանք մինչև մեր գործի ավարտը:

### **Երկրորդ մեղքը՝ ազահություն**

Բառարանը բնորոշում է իբրև իգական սեռի գոյական: «Անչափ անկուշտ ցանկությունների բավարարման ձգտում»: Հումանիշներն են շահասիրությունը, ընչաքաղցությունը, կծծությունը:

Կարթիկ եկեղեցին բնորոշում է որպես 10-րդ՝ «Մի՛ ցանկացիր քո մերձավորի տունը, մի՛ ցանկացիր քո մերձավորի կնոջը, ո՛չ նրա հողը, ո՛չ նրա ստրուկին, ո՛չ նրա ստրկուհուն, ո՛չ նրա եզանը, ո՛չ նրա էշին, ո՛չ նրա որևէ անասունի, ոչինչ, ինչ ունի քո մերձավորը» պատվիրանի խախտում: Հաճույքների կամ ձեռքբերումների հակումն է կամ անգուսպ ցանկությունը:

Փիլիսոփա Սենեկան ասել է՝ աղքատներն ուզում են ինչ-որ բան, հարուստները՝ շատ բան, ազահները՝ ամեն ինչ»:

Անապատային հայրերի պատմությունը ասում է. «Հա՛յր սուրբ,- դիմեց վանականը վանահորը,- իմ սիրտը սիրով է լցված ամբողջ աշխարհի հանդեպ, հոգիս զերծ է սատանայական փորձություններից: Ի՞նչ է պետք, որ անեմ հիմա»: Վանահայրը խնդրեց, որ վանականն ուղեկցի իրեն մի ծանր հիվանդի մոտ, որին պետք էր մեղքերի թողություն տալ: Ուժերը ներածին չափով միսիթարելով մերձավորներին՝ վանահայրն անկյունում մի սնդուկ նկատեց և հարցրեց, թե ինչ է այնտեղ: «Հագուստ,- պատասխանեց հիվանդի զարմիկը,- հագուստ, որն իմ քեռին երբեք չի հագել: Նա գնում էր իրեր՝ մտածելով, որ առիթ կլինի հագնելու այս կամ այն իրը, բայց արդյունքում այդ ամենը փտում է այդ սնդուկում»: «Մի՛ մոռանա այդ մասին,- երբ լքում էին մահացողի տունը, շնչաց վանահայրը վանականին,- եթե քո սրտում հոգևոր գանձեր կան, մի՛ հապաղիր, գործի՛ դիր: Այլապես կկորչեն ապարդյուն»:

Հողվածը վերաբերում է 1997 թվականի ասիական ֆինանսական ճգնաժամին: Բորսայի միջնորդները գնում և վաճառում էին՝ համոզած, որ աշխարհը չի փոխվի, իսկ իրենք պետք է միայն ավելացնեն եռանդը և հետևեն, թե ինչպես է իրենց հարստությունն աճում: Նրանք ուշադրություն չէին դարձնում, թե ինչ վնաս են

հասցնում տեղական (մալազիական) արժույթին: Եվ ահա շրջանառությունից 500 միլիարդ դոլար հանկարծակի դուրս եկավ: Իսկ երբ եկավ ժամանակը բացատրություն տալու բոլոր նրանց, ով կորցրել էր երկար տարիների ընթացքում և մեծ գոհողությունների գնով կուտակած խնայողությունները, պատասխանը մեկն էր՝ շուկան է մեղավոր: Բայց չէ՞ որ հենց իրենք են շուկան:

Մահն ու Ագահությունը մի անգամ նայում էին, թե ինչպես են մարդիկ կաշվից դուրս գալով ավաստ փնտրում: «Մի քանիսին տանեմ,- մրմնջաց Մահը:- Այս մարդկանց մեկ երրորդն ինձ տո՛ւր, և ես կհեռանամ»: «Նրանք ինձ են պատկանում,- պատասխանեց Ագահությունը:- Նրանք իմ ստրուկներն են: Ոչ մեկին քեզ չեմ տա»: Այդժամ Մահն իր կախարդական ձեռնափայտով կպավ ջրին և թունավորեց: Եվ շուտով բոլորը, ովքեր կային այնտեղ, մեռան: «Ինչո՞ւ վերցրիր իմ բոլոր ստրուկներին», - կատաղած գոռաց Ագահությունը: «Նրա համար, որ դու չուզեցիր տալ գոնե մեկին», - պատասխանեց Մահը:

Ադոլֆ Հիտլերը, 6 միլիոն հրեայի մահվան հասցնող հոլոքոստի հիմքը պատրաստելով, իր ճառերից մեկում ասել է. «Արտադրելու իր անընդունակությամբ հրեա ժողովուրդը մակաբույծ է: Ագահությամբ առաջնորդվող հրեաներն իրենց շահերի համար օգտագործում են միջին խավի հիմարությունը»:

Շատ հարյուրամյակներ առաջ բաբբի Մոշե բեն Մայմոնն այսպես է ասել. «Աստված մարդու մոտ է ուղարկում իր սուրհանդակներին, որոնք «հիվանդություն» են կոչվում: Աստվածային նախախնամությունն ինձ հանձնարարել է հոգ տանել իմ առողջության համար: Թող ամեն բույե սերն ինձ ուղղորդի այն բանին, ինչ անում եմ: Թող երբեք ագահությունը, կամ իշխանասիրությունը, կամ ճանաչման ծարավը իմ աչքերը չփակեն, չստիպեն ինձ մոռանալ, որ ամեն մարդ պետք է ձգտի մյուսին տալու ամենալավը, որն ինքն ունի»:

«Դառ Դե Յզին» գրքի խորհուրդը.

Մարդկային աչքը հինգ գույն է կուրացնում: Մարդկային ականջները հինգ նոտա խլացնում է: Հինգ համ ծվատում է երկինքը: Չիարշավն ու որսորդությունը սրտում վայրի և անգուսպ կրքեր են արթնացնում: Բարիքները, որոնց կարելի է հասնել միայն հաղթահարելով վտանգավոր խոչընդոտները՝ հղի են վերքերով: Դրա համար էլ իմաստունը մերժում է մակերեսայնությունը և նախընտրում է խորասուզվելը:

### **3-րդ մահացու մեղքը՝ ցանկասիրություն**

«Ցանկասիրությունը» բառարանը բնորոշում է որպես իգական սեռի գոյական: Հումանիշներն են հեշտասիրությունը, մոլորությունը, չափազանց վավաշոտությունը:

Կաթոլիկ եկեղեցին բնորոշում է որպես չափից դուրս ձգտում սեռական հաճույքների: Ցանկություններն ու արարքները համարվում են չափից դուրս, երբ չեն համաձայնում աստվածային ծրագրին, որը ամուսինների միջև փոխադարձ սերուն և սերունդը շարունակելուն նպաստելն է: Ցանկասիրությունը խախտում է 10 պատվիրաններից մեկը (Մի՛ շնանար):

Հենրի Կիսինջերը կարծում է, որ չկա ավելի ուժեղ գրգռող միջոց, քան իշխանությունը:

Բուդդայական լեզենդը պատմում է, թե ինչպես Չուն և Վուն, մի շարաթ անցկացնելով եկեղեցում, որտեղ տրվել էին մեդիտացիայի, տուն էին վերադառնում: Ճանապարհին նրանք քննարկում էին, թե ինչպիսի գայթակղություններ են ձգում մարդկանց:

Մոտենալով գետափին՝ նրանք տեսան մի գեղեցիկ կնոջ, որը չգիտեր, թե ինչպես անցներ գետը: Չուն գրկեց նրան և անցկացրեց գետը, որից հետո Վունի հետ շարունակեց իր ճամփան:

Քիչ անց Վուն հարցրեց.

- Մենք խոսում էինք գայթակղությունից, իսկ հետո դու գրկեցիր այդ կնոջը: Եվ այդպիսով մեղքին թույլ տվեցիր սողոսկել հոգուդ մեջ:

- Իմ թանկագին,- նրան պատասխանեց Չուն,- ես բնական եմ վարվել: Հանդիպեցի կնոջ, անցկացրի հորձանուտը և թողեցի մյուս ավիին: Իսկ այ դու շարունակում ես նրան գրկել քո մտքերում, ուստի դու մեղքին ավելի մոտ ես:

Անառակի օրագրից. «Մեկ ժամվա համար 350 շվեյցարական ֆրանկ եմ վերցնում: Դա թանկ է: Նշված ժամանակում պետք է հանվել, քիչ թե շատ ճշմարտանման ինչ-որ քնքշանք ցուցադրել, ակնհայտ բաների մասին խոսել և հագնվել. սեքսին որպես այդպիսին մնում է ընդամենը տասնմեկ րոպե:

Տասնմեկ րոպե: Ողջ աշխարհը պտտվում է այն բանի շուրջը, որն ընդամենը տասնմեկ րոպե է տևում: Եվ ահա հանուն օրվա ընթացքում այդ տասնմեկ րոպեի (ակնհայտորեն չկատարվող այն պայմանով, որ ամեն օր բոլոր տղամարդիկ իրենց կանանց հետ սիրով են զբաղվում) ամուսնանում են, ապահովում ընտանիքը, հանդուրժում նորածինների լացը, գտնում ճշմարտանման բացատրություններ, երբ սովորականից ուշ են վերադառնում, նայում են տասնյակ կամ հարյուրավոր կանանց, որոնց հետ Ժնևյան լճի ավիին շրջելուն դեմ չէին լինի, իրենց համար թանկարժեք հագուստ են գնում և էլ ավելի թանկ նրանց համար, վճարում են անառակներին, որ փոխհատուցեն պակասը, իսկ թե ինչի՞ պակասը հատկապես՝ իրենք էլ չգիտեն, կոսմետիկայի, դիետայի, ֆիտնեսի, պոռնոգրաֆիայի հսկայական արդյունաբերություն են պահում և չնայած տարբեր կարծիքների՝ տղամարդկանց շրջանում ոչ թե կանանցից, այլ գործերից, փողից, սպորտից են խոսում: Ինչ-որ բան այն չէ մեր քաղաքակրթության հետ:

Ցանկասիրություն և թվեր (2002 թվականի տվյալներով). Ուիլյամ Լայոնը « Ազատ խոսքի կռալիցիա» գրքում հաշվել է, որ հենց միայն համացանցում պոռնոկայքերը տարեկան 10 - 12 միլիարդ դոլար եկամուտ են բերում, ինչը մի քանի անգամ գերազանցում է «Մայքրոսոֆթ» ընկերության եկամուտը: 1999 թվականին տեսասարտադրանք վաճառողների և դրանք ծրագրերով ապահովողների միությունը հայտարարել է, որ պոռնոֆիլմերի վաճառքն ու վարձույթը բերել է 4,1 միլիարդ դոլար, ինչը նույնիսկ հոլիվուդյան ամենաթանկարժեք ֆիլմերի եկամուտից շատ ավելի մեծ եկամուտ է:

«Դատ Դե Ցզին» գրքում ասվում է. «Անխափան միասնության մեջ պահպանի՛ր հոգուդ զգայունությունը և մարմնիդ կենդանական սկիզբը»:

Կենսական ուժը կարողացիր այնպես սանձել, որ կրկին վերածվես նորածնի:

Երբ կարողանաս ձերբազատվել քո երևակայության խորհրդավոր պատկերներից, ապա անբիծ կլինես:

Մաքրվիր և տրամաբանության ուժը մի՛ օգտագործիր, որ Գաղտնիքի պատասխանը գտնես:

Ըմբռնումը թափանցում է չորս կողմ, բայց միննույն է, դու չես հասկանա, թե ինչն է կյանք տալիս և պահպանում այն:

Ինչը կյանք է տալիս, տիրապետում չի պահանջում: Բարեգործություն է անում՝ չսպասելով երախտագիտության: Ազդում է՝ չցուցաբերելով իշխանատենչություն: Այդպիսին է այն, ինչը «խորհրդավոր որակ» կոչվում է:

#### **4-րդ մահացու մեղքը՝ զայրույթ**

Բառարանը բնորոշում է որպես արական սեռի գոյական: Հումանիշներն են վրդովմունքը, մոլեգնությունը, վրեժխնդրությունը:

Կաթոլիկ եկեղեցին պնդում է, որ զայրույթը ոչ միայն ուրիշների դեմ է ուղղված, այլ կարող է ուղղվել և նրա դեմ, ով նրան թույլատրել է իր հոգում ծիլեր արձակել, և այդ դեպքում այն կարող է ինքնասպանության հանգեցնել: Հարկ է գիտակցել, որ պատիժն ու դրա ի կատար ածումը պատկանում են Աստծուն:

Verba Seniorum («Նախնիների խոսքը») ժողովածուում պատմվում է երկու իմաստունների Սահարա անապատի միննույն խցում էին ապրում, և ահա նրանցից մեկն ասում է մյուսին. «Արի, հայհոյենք իրար , այլապես շուտով կարգին չենք հասկանա՝ ինչ կրքեր են մեզ տանջում»:

«Ես չգիտեմ՝ ինչպես կռիվ սկսեմ», - պատասխանում է երկրորդ անապատականը:

«Այսպես կանենք. ես այս պնակը կդնեմ այստեղ, իսկ դու կասես՝ սա իմն է: Ես էլ կպատասխանեմ՝ դա ինձ է պատկանում: Կսկսենք վիճել, հետո էլ կովենք»:

Այդպես էլ արեցին: Մեկն ասաց, որ պնակն իրենն է, մյուսն առարկեց: «Ժամանակ չկորցնենք,- ասաց այդ ժամանակ առաջինը:- Քեզ վերցրու: Այնքան էլ հաջող չէր վեճի հետ կապված քո միտքը: Երբ մարդ գիտակցի, որ հոգու անմահություն ունի, երբեք չի սկսի վիճել իրերի պատճառով»:

Ջենիս Ուիլյամսի կողմից 6 տարի 13 000 հետազոտվողների շրջանում անցկացված լաբորատոր հետազոտությունները թույլ տվեցին հաստատել, որ հեշտ և հաճախ նյարդայնացող 45-ից 64 տարեկան մարդկանց շրջանում ինֆարկտի

հավանականությունը 3 անգամ ավելի բարձր է, քան նրանց մոտ, ովքեր են հոգեկան հավասարակշռվածություն են պահպանում:

Այդպես է, քանի որ Չայրույթի յուրաքանչյուր բռնկումից ադրենալինի քանակն արյան մեջ ավելանում է, ինչը հանգեցնում է սրտխփոցի հաճախացմանը և միաժամանակ արյան անոթների նեղացմանը, որից բարձրանում է զարկերակային ճնշումը: Դրա արդյունքը սովորաբար ինֆարկտի հետ կապված երկու հիվանդագին երևույթ է՝ սրտի ռիթմի խանգարում և անոթների պատերի հատվածների կտրուկ լայնացում: (Աղբյուրը՝ Գ. Ժ. Բալուն «Կատաղություն և աստելություն, նեգատիվ հույզեր»)

Բրազիլական հայտնի երգում ասվում է. «Քանի դեռ սիրտս խփում է, իմ կրծքում միայն բան կա՝ վրեժ: Վրեժ, վրեժ: Բոլոր սրբերին վկա եմ կանչում. երկրի վրա տեղ չես գտնի, կթոչես՝ ինչ ուղղությամբ քամին փչի, ծուխ կդառնաս, կփտես, կկորչես» (Լուպիսինիո Ռոդրիգես):

Ուիլյամ Բլեյքն այսպես է ասել. «Շնկերոջս վրա բարկացած էի և նրան ասացի այդ մասին. բարկությունս անցավ: Բարկացած էի թշնամուս վրա և նրան չեմ ասել այդ մասին. բարկությունս սաստկացել է»:

Ուրիշի հանդեպ աստելություն (քսենոֆոբիա). «Մահմեդականները ներխուժել են բոլոր արևմտյան երկրները: Այդ եկվորներից ոմանք նույնիսկ ընդունակ են կիրթ խոսելու՝ սպասելով հարմար վայրկյանի, որ մեզ քարկոծեն: Մեզ հավատացնում են, որ սեպտեմբերի 11-ի իրադարձությունները թշնամական քաղաքակրթությունների բախումն է: Սուտ է. երկու քաղաքակրթությունների բախման համար պետք լինեն երկու քաղաքակրթություններ, այն դեպքում, երբ միայն մեկը կա՝ մերը (Դանիական ժողովրդական կուսակցության ղեկավարության հայտարարությունից, որը սերմանում է աստելություն և նոր ֆաշիզմ, որի աճին ո՛չ Եվրոպան, ո՛չ մնացած ողջ աշխարհը չեն ընդդիմանում)»:

«Դառ Դե Ցզին» գրքում ասվում է. «Ցանկացած զենք չարիք է և չպետք է գործադրվի իմաստուն տիրակալի կողմից: Միայն խստագույն անհրաժեշտության դեպքում է նա դրանք կիրառում: Հանգստությունն ու չգործելը նրան ավելի շատ կշիռ և նշանակություն են տալիս. նրա ցանկալի չէ զենքի ուժով ձեռք բերված հաղթանակը:

Ով այդպիսի հաղթանակն է անհրաժեշտ համարում, անկասկած վկայում է, որ ուրիշ մարդկանց սպանելուց հաճույք է ստանում և չի կարող ղեկավարել պետությունը:

Եթե մեկին ուզում ենք թուլացնել, ուրեմն սկզբից պետք է ուժեղացնենք նրան: Եթե մեկին տապալելու մտադրություն ունենք, ապա նախ պետք է նրան բարձրացնենք: Եթե մտքներիս կա սնանկացնել, պետք է հեղեղենք նրան նվերներով: Մա է, որ կարող է ճշգրիտ հաշվարկ կոչել:

Եվ այդպես ենթականերն ու թույլերը կհաղթեն դաժաններին ու ուժեղներին:

### **Հինգերորդ մեղքը՝ որկրամոլություն**

Բառարանը բնորոշում է որպես իզական սեռի գոյական: Ուտելիքի և խմիչքի չարաշահումն է: Շատակերությունը:

Ըստ կաթուղիկ եկեղեցու՝ ուտելիքից և խմիչքից հաճույք ստանալու չափից դուրս մեծ ցանկությունը: Առողջության համար վնասակար մթերքներից կախվածությունն զգալ չի կարելի: Չի կարելի ուտելիքին չափից շատ մեծ նշանակություն տալ: Թունավորման հանգեցնող անկառավարելի շատակերությունն իսկական անմիտ արարք է և մահացու մեղք:

Պետեր դը Վրիսը կարծում է, որ շատակերությունը վկայում է ներքին խռովքի մասին. ներսից ինչ-որ բան կրծում է մեզ:

“Verba Seniorum” («Նախնիների խոսքը») ժողովածուում պատմվում է: Մի անգամ եղբայրներից մեկի հետ զբոսնող վանահորը հրավիրում են ընթրիքի: Մուրբ հայրերի ներկայությունն իրեն պատիվ համարելով՝ տանտերը պատվիրում է սեղանին ամենալավ բաները դնել: Այնինչ վանականն այդ ժամանակ պաս էր պահում, և երբ ճաշը բերում են, կանաչու մի ճյուղ վերցրեց ու սկսեց դանդաղ ծամել: Եվ բերանն այլևս ոչինչ չդրեց:

Իսկ ընթրիքի վերջում վանահայրն ասաց նրան.

- Եղբա՛յր, երբ հյուր ես գնում, աշխատի՛ր, որ քո բարեպաշտությունը վիրավորանքի չվերածվի: Եվ երբ հաջորդ անգամ որոշես պաս պահել, ընթրիքի հրավերք մի՛ ընդունի:

Տրյուֆելով սագի լյարդ (բաղադրատոմս): Լյարդը լավ լվանալ, տրյուֆելի հետ կտրտել: Խոզի ճարպի շատ բարակ կտորների հետ շերտ-շերտ դնել փոքր բարձր կաթսայի մեջ: Մի քիչ աղ ու պղպեղ ավելացնել: Եզրերին խմոր քսելով՝ ամանը հերմետիկ փակել և «ֆուա-գրան» ջրային բաղնիքով դնել ջեռոցը: Հետո վրայից ծանրոց դնել այնպես, որ ստացված զանգվածը միասեռ և պինդ լինի:

Աշխարհում սով է: Զարգացող երկրներում 2030 թվին սովյալների թիվը ներկայիս 777 միլիոն մարդուց պետք է կրճատվի մինչև 440 միլիոն: Սա նշանակում է, որ այդպես էլ չի իրականանա այն նպատակը, որ 1996 թվին Համաշխարհային պարենային կազմակերպությունն էր հռչակել, այն է՝ կրկնակի կրճատել սովյալների թիվը (1990-92թթ սովյալներով՝ 815 միլիոն մարդ): Հատկապես մտահոգիչ է վիճակը Սև Աֆրիկայի երկրներում, որտեղ խրոնիկ սովյալների թիվը 2030 թվականին այժմյան 194 միլիոն մարդուց իջնելու է ընդամենը մինչև 183 միլիոն: (Աղբյուրը FAO<sup>5</sup>-ի զեկույցն է՝ Համաշխարհային գյուղատնտեսական արտադրություն. 2015 -2030 թթ հեռանկար):

Սովեատական ավանդությունը պատմում է, թե ինչպես ոմն հացթուխ վաղուց էր ցանկանում ծանոթանալ Ուվայսի հետ, և մի անգամ ահա վերջինս մուրացկանի կերպարով մտնում է նրա փուռը: Սկսում է հաց խնդրել, բայց տերը աքացիներով նրան փողոց է քշում:

- Անմի՛տ,- գոչում է սրբի աշակերտներից մեկը:- Մի՞ թե չես տեսնում, որ դուրս

<sup>5</sup> FAO (անգլ.)՝ ՄԱԿ-ի պարենային և գյուղատնտեսական կազմակերպություն (ծանոթ.՝ խմբագրի)

արեցիր ուսուցչին, ում հետ ուզում էիր ծանոթանալ:

Ամոթահար հացթուխը հարցնում է, թե ինչ կարող է անել, որ ներման արժանանա:

«Կերակրի՛ր ինձ և իմ աշակերտներին», - պատասխանեց Ուվայսը:

Հացթուխը նրանց տարավ ամենալավ խորտկարանը և պատվիրեց ամենաթանկ ուտելիքները:

- Ահա այսպես լավ մարդուն կարող ենք տարբերել վատից, - ասաց Ուվայսն աշակերտներին: - Այս մարդն ընդունակ է 10 ոսկի ծախսելու հայտնի մարդու հյուրասիրության համար, բայց քաղցածին մի կտոր հաց չի մեկնի:

«Դատ Դե Ցզին» գրքում ասված է. «Մի գնդի վրա երեսուն շյուղ է շարվում՝ անիվ ստեղծելով, բայց անիվի ճիշտ աշխատանքը կախված է ճաղերի միջև եղած դատարկությունից: Կավից անոթներ պատրաստում, բայց դրանց գործածումը կախված է նրանց ներսի դատարկությունից: Դռներ և պատուհաններ են բացում, որ տուն ստեղծեն, բայց տան օգտագործումը կախված է նրա մեջ եղած դատարկությունից: Ահա թե ինչու ինչ-որ բան ունեցողի օգտակարությունը կախված է դատարկությունից:

### **Վեցերորդ մեղքը՝ նախանձ**

Բառարանը բնորոշում է որպես իզական սեռի գոյական, որ ծառայում է արտահայտելու մի զգացում, որում միանում են կատաղությունն ու զոջումը: Անբարեհաճությունը մեկի բարեկեցության կամ ուրախության հանդեպ: Ինչ-որ բանի, որն ուրիշին է պատկանում, տիրանալու ցանկությունը:

Կաթոլիկ եկեղեցին հաստատում է, որ նախանձը խախտում է տասներորդ պատվիրանը: Առաջին անգամ հիշատակվում է Սուրբ գրքում՝ Կայենի և նրա եղբայր Աբելի դրվագում:

Հին հրեական ավանդությունը պատմում է, թե ինչպես աշակերտը հարցրել է ուսուցիչներին Սուրբ գրքի այն հատվածի մասին, որտեղ ասված է. «Եվ Աստված նայեց Աբելին և նրա ընծային, իսկ Կայենին և նրա ընծային չնայեց: Կայենը խիստ տխրեց, և մթնեց նրա դեմքը: Եվ ասաց Աստված Կայենին՝ ինչո՞ւ տխրեցիր, և ինչի՞ց մթնեց քո դեմքը»:

Բարբիները նրան պատասխանեցին.

- Աստված պետք է հարցներ Կայենին՝ ինչո՞ւ տխրեցիր: Նրանից, որ մերժեցի քո ընծա՞ն, թե՞ որ ընդունեցի քո եղբոր ընծան:

Լրագրող Չունիթ Վենտուրան կարծում է, որ նախանձը «տաշում է», «կրծում», այսինքն՝ ավերիչ ազդեցություն է ունենում: Դրա հետ մեկտեղ պետք է նախանձը դիտարկել որպես մարդուն բնորոշ ռեակցիա: Բոլոր տեսաբանները համակարծիք են, որ նախանձի դեմ պայքարի ամենալավ միջոցը խոստովանելն է, որ նա այս կամ այն



չափով բնորոշ է բոլորին և յուրաքանչյուրին:

Գրող Ջովանի Պասինի. «Քեզ ստորացնել ցանկացողներից վրեժխնդիր լինելու ամենալավ ձևը հետևյալն է՝ պետք է ձգտել հասնելու ամենաբարձր կետին: Իսկապես իմաստուն մարդը հայեցողներից կօգտվի, որ ավելի հստակ բացահայտի իր կերպարը և լույսը փակող ստվերները վերացնի: Եվ այդ ժամանակ նախանձորդը, ինքն էլ չուզենալով, կնպաստի քո կատարելագործմանը»:

Նախանձը և էթիկան: Գիտնական դոկտոր Ուիլյամ Շելտոնի կարծիքով նախանձը անհաջողության մատնված և իրականությունից հեռանալ ձգտող, «բարոյական արժեքների», «վեհ նպատակների» և «սոցիալական արդարության» վերականգնման ծխեքողի հետևում թաքնված մարդկանց ռեակցիան է: Իրավիճակը կարող է վտանգավոր դառնալ, երբ կրթական համակարգն ուսանողի մեջ սկսում է հաջողակ մարդկանց բացասաբար վերաբերվելու հնարավորություն ընձեռող պայմաններ զարգացնել՝ ցանկացած հաջողություն բացառապես կոռուպցիայով, ճարպկությամբ և բարոյական նորմերի անտեսմամբ բացատրելով: Քանի որ հաջողության հասնելու ձգտումը ինքնին հատուկ է մարդկային բնությանը, ուսանողները շիզոֆրենիկ ձևով սկսում են ատել հենց այն, ինչը կարող էր հաջողության հանգեցնել: Այդպիսով ուժեղանում է տանջալից անձկությունը և հասարակությունը թարմացնելու և բարելավելու ընդունակությունը պակասում է:

Սատանան և չարքերը: Չարքերը մի անգամ բողոքում են Մթության իշխանին. «Երկու տարի շարունակ փորձում ենք գայթակղել ձգնավոր անապատականին: Նրան փող ենք առաջարկել, կին ու այն ամենը, որ կա մեր զինանոցում. և ամեն ինչ անօգուտ է»:

- Կարգին աշխատել չեք կարողանում,- պատասխանեց Սատանան:- Նայեք, թե նման դեպքում ինչպես պետք է վարվել:

Եվ նրանք բոլորը թռան քարանձավի մոտ, որտեղ ձգնավորն էր ապրում: Եվ Սատանան նրա ականջին շշնջաց.

- Քո ընկեր Մակարը հենց նոր դարձավ Ալեքսանդրիայի եպիսկոպոսը:

Եվ վանականն անմիջապես սկսեց հայեցել Աստծուն ու կործանեց իր հոգին:

«Դառ Դե Յզին» գրքում ասվում է. հին ժամանակներում նրանք, ովքեր գիտնականության ընդունակություն ունեին, մանրագույն և նրբին բաներ գիտեին: Բայց ուրիշներին նրանց խորությունը չէր երևում. նրանք վեհերոտ էին նրանց նման, ովքեր զարնանային բարակ սառույցի վրայով անցնում են գետը, զգույշ, ինչպես այն մարդը, ով հյուր է չափազանց ծիսակատար մի տանտիրոջ, պարզունակ, ինչպես չտաշած փայտը, որին մարդկային ձեռքերը դեռ ինչ-որ ձև չեն տվել:

Ո՞վ կարող է միայն հոգեկան հավասարակշռությամբ աստիճանաբար մաքրել ամենը, ինչ մաքուր չէ: Ո՞վ կարող է անդորրի հասնել և միշտ մնալ: Ով հետևում է կատարելության ուղիերին, ոչ մի բանով չի ցանկանում լցվել:

### **Յոթերորդ մեղքը՝ ծուլություն**

Բռտարանը բնորոշում է որպես իզական սեռի գոյական: Աշխատանքի հանդեպ զգվանքն է, աշխատել չցանկանալը, անփութությունը, ալարկոտությունը:

Կաթոլիկ եկեղեցին հաստատում է, որ բոլոր կենդանի արարածները պարտավոր են իրենց քրտինքով վաստակել իրենց հացը՝ ընդ որում չմտածելով արագ և երաշխավորված արդյունքների մասին: Ծուլությունը, որպես ֆիզիկական և հոգևոր ջանքի բացակայություն, ապականում է հոգին և հանգեցնում ունայնության ու տխրության:

Լեզենդը պատմում է, որ Ժուանը մեռնում է ու հայտնվում մի գեղեցիկ վայրում, որտեղ ամեն ինչ ազատ է, հարմար և հենց այնպես, ինչպես ինքը միշտ երազել է: Սպիտակ զգեստով մեկը մոտեցել է նրան և ասել. «Դու իրավունք ունես պահանջելու ինչ ուզում ես՝ ցանկացած զվարճանք, հաճույք, համեղ ուտելիք»:

Ուրախացած Ժուանը սկսում է ապրել այնպես, ինչպես միշտ երազել էր: Իսկ մի շատ տարներ անց նա դիմում է սպիտակ շորերով մարդուն.

- Արդեն հազեցել եմ այն ամենից, ինչ ուզում էի: Այժմ ինձ աշխատանք է պետք, որ ինձ օգտակար զգամ:

- Շատ եմ ցավում,- պատասխանում է նա,- Բայց դա միակ բանն է, որ չեմ կարող տալ: Այստեղ աշխատանք չկա:

- Ինչպե՞ս թե: Հար ու հավետ դատապարտված եմ ձանձրույթից տանջվելո՞ւ: Ոչ, դժոխք ընկնելը հազար անգամ ավելի լավ կլիներ:

Սպիտակ հագած էակը մոտենում է և հազիվ լսելի հարցնում.

- Իսկ քո կարծիքով դու որտե՞ղ ես:

Ուինի Ալբերտը հարցնում է՝ արդյոք կարո՞ղ է հասարակությունը գոյատևել, եթե ավելի ու ավելի է հրապուրվում սառեցված մթերքներով, ակնթարթային լուսանկարներով, կարտոֆիլի պյուրեով, արագ ընթերցանությամբ և էլեկտրոնային հաշվիչներով:

Ծուլության սոցիոլոգիան: Ե՛վ նա, ով ջանասիրաբար աշխատում է, և՛ նա, ով աշխատանքից խուսափում է, նույն կերպ են վարվում՝ աշխատում են հեռու մնալ մարդկային կյանքին հատուկ խնդիրներից, չմտածել իրականության և պատասխանատվության մասին, առանց որի նորմալ կյանք հնարավոր չէ: (Ադրյուրը՝ Ստիպողական աշխատանք, Օքսֆորդ, 2001)

Բուդդայական ուսմունքի համաձայն՝ ծուլությունն ավանդաբար համարվում է հոգու արթնացմանը խոչընդոտող հիմնական գործոններից մեկը: Ծուլությունը դրսևորվում

է երեք ձևով՝ նախկին տեղում, որտեղ հարմար ու լավ է մեզ համար, միշտ մնալու ցանկությունն. կա սրտի ծուլություն, երբ ունայնության մեջ ենք ընկնում և տանջվում խթանի բացակայությունից: Եվ վերջապես կա մորմոքի ծուլություն, երբ ամեն ինչ մեզ համար մեկ է, և այլևս այս աշխարհին չենք պատկանում:

«Դառ Դե Ցզին» գրքում ասվում է. ճանապարհով գնացող մարդը հարմարվում է ճանապարհին: Բարեգործությամբ ապրող մարդը հարմարվում է բարեգործությանը: Ինչ-որ բան կորցրած մարդը հարմարվում է կորստին: Ճանապարհն ուրախ է ընդունում նրան, ով հարմարվել է ճանապարհին: Բարեգործությունը՝ նրան, ով ապրում էր բարեգործությամբ: Ով հաշտվում է կորկորստի հետ, նրան ընդունում է Կորուստը:

Սովորել ենք ինքներս մեզ հարցնելու. «Որտեղի՞ց է ներշնչանքը: Որտե՞ղ է թաքնվում ապրելու ուրախությունը»: Ամբողջ անցյալ տարվա ընթացքում ջանացել ենք դուրս գալ սեփական շրջանակներից, տեղաշարժել հորիզոնները, ապահովել ենք մեր ընտանիքները, աշխատել ենք ողջ ուժով, բայց միևնույն է, չենք հասել նրան, ինչին ձգտել ենք: Լույսի Ձինվորը գիտակցում է, որ հոգու զարթոնքը երկար ընթացք է, որ նպատակին հասնելու համար պետք է հավասարակշռության բերել հայեցողությունն ու գործողությունը: Այո, գուցե ամեն ինչ ճիշտ ենք արել, իսկ արդյունքն այդպես էլ չի երևում: Այնուամենայնիվ, ես համոզված եմ՝ արդյունք կա: Եվ անպայման դա կերևա, եթե միայն հետ չկանգնենք մեր անելիքից, հետ չշրջվենք:

### Աստված հավատում է ինձ

*«Топ-книга» կայք  
Հարցազրույցը՝ Իտկին Վլադիմիրի*

– Պատվո, որքան ես գիտեմ, պատանեկության տարիներին ձեզ երեք անգամ ուղարկել են հոգեբուժարան: Ի՞նչ էք զգում, երբ վերհիշում եք անցյալում կատարված այդ իրադարձությունները:

– Երբ սովորում էի դպրոցում, հասկացա, որ գրող դառնալով միայն ես կարող եմ արտահայտել իմ զգացմունքները: Եվ, երբ առաջին անգամ որոշեցի իրագործել գրող դառնալու իմ երազանքը, բախվեցի դառը ճշմարտության հետ. «Բրազիլիայում գիրք չեն կարդում», - այդպես ասաց մայրս:

Բայց ես նրան չլսեցի: Ես պատրաստ էի պայքարել բոլոր տեսակի խոչընդոտների դեմ: Ինձ պարզապես անհրաժեշտ էր հագուրդ տալ ներսումս առկա խանդավառությանը: Իհարկե, հաճախ վրդովմունքն ու անհանգստությունը ճնշում էին, սակայն սեփական ճամփորդության մեկնելուց առաջ իմաստությունը ինձ հերիքում էր այրել բոլոր կամուրջները: Ես ունեցել եմ ճշմարիտ սիրո հուսահատ որոնումներ, ինձ համար եղել է անչափ դժվար, մի քանի անգամ ինձ ուղարկել են գժանոց: Սակայն, ես երբեք ինձ զոհ չեմ համարել: Ընդհակառակը, դա իմ կյանքի ճանապարհի մի մասն է՝ սա է իմ համոզմունքը:

– Ասացեք, խնդրեմ, որևէ կապ կա՞ մանկության շրջանի Ձեր կրոնական որոնումների և գրող դառնալու Ձեր որոշման մեջ:

– Ոչ, ամենևին ոչ:

– Ինչպիսի՞ խոչընդոտների եք հանդիպել գրող դառնալու ճանապարհին:

– Ամենադժվարը որոշում կայացնելն է: Երազանք ունենալը լավ բան է, իսկ, այ, այդ երազանքը համաձայնվել իրականություն դարձնելը՝ շատ ավելի դժվար:

– Ձեր կյանքում ո՞ր պահը կարելի է համարել շրջադարձային:

– Դա իմ ուխտագնացության ժամանակ էր, 1986թ.-ին: 56 օրերի ընթացքում, երբ ես Ֆրանսիայից մեկնում էի Սանտյագո դը Կոմպոստելլա, շատ անսպասելի հասկացա, որ Աստծո հետ հարաբերվելը շատ ավելի հեշտ է, քան ես մտածում էի: Փոխանակ փորձել հասկանալ՝ «ինչո՞ւ եմ ես այստեղ», պարզապես պետք է «լինել այստեղ»՝ այստեղ և հիմա: Հարկավոր է հասկանալ՝ ի՞նչ է ի վերուստ քեզ համար սահմանել Աստված: Ես միշտ ցանկացել եմ գրող դառնալ, երբ ես 38 տարեկան էի, մտածում էի՝ ժամանակն անցավ: Բայց, երբ իմ ուխտագնացությունը մոտեցավ ավարտին, ես ասացի ինքս ինձ. եթե դու ուզում ես լինել «այստեղ և հիմա», դու պետք է պայքարես քո երազանքի համար: Եվ որոշեցի գրել իմ առաջին գիրքը:

– Ի՞նչը օգնեց Ձեզ գրող դառնալու դժվար կարիերայի ընթացքում:

– Այն փաստը, որ ես չեմ ընկնում ընդարմացման մեջ, գլուխս չեմ կորցնում հաջողությունից կամ անհաջողությունից: Նայիր ճանապարհին՝ միաժամանակ արագացնելով ընթացքը: Չնայելով կողքերն ու անհաջողությունները՝ առաջ գնա:

– Դուք ասում եք անհրաժեշտ է «հետևել երազանքին» և հող նախապատրաստել այդ երազանքի իրագործման համար: Բայց, ինչպե՞ս իմանանք՝ երազանքը իրոք մեր երազանքն է: Ինչպե՞ս կարելի է այս մասին հայտարարել մի աշխարհում, որտեղ մեղիան է թագավորում:

– Ես հավատում եմ, որ յուրաքանչյուրն ունի իր առաքելությունը: Ազատ լինելով մեղիայից՝ նա միշտ էլ գիտի՝ ինչ պիտի անի: Իսկ ի՞նչ է նշանակում անձնական առաքելություն: Սա մեր կյանքի իմաստն է ու առաջ մղող ուժը:

– Շատ մարդիկ կարծում են, որ երազանքին հավատալը, ի վերջո, հանգեցնում է երևակայության խաթարմանը, որն էլ հետևանք է դառնում իրական կյանքից հեռանալուն և աստիճանաբար հիմարանալուն: Դուք ի՞նչ եք մտածում այս մասին:

– Ի՞նչ են նրանք հասկանում «իրական կյանք» ասելով: Մեջբերում եմ Ջոն Լենոնի խոսքը. «Կյանքը այն է, ինչ լինում է, երբ դու զբաղված ես կյանքի մասին նախագծեր կազմելով»:

– Ձեր գրքերի բոլո՞ր նշաններն են հասու սովորական մահկանացուներին:

– Բացարձակապես բոլորը: Պարզապես անհրաժեշտ է կարդալ, ըմբռնել ու հասկանալ ոչ թե մտքով, այլ սրտով:

– Գիտե՞ք, որ շատ մարդիկ, ինքնության ճգնաժամ ապրելով, ինքնասպանություն են գործում՝ վերջ դնելով կյանքին: Ի՞նչ էք մտածում այդ մասին: Խնդրում եմ կապ տեսնել Ձեր հետևյալ բառերի միջև. «Եթե ուզում եք մի բան, դրա համար պետք է պայքարել, այդ ժամ ամբողջ տիեզերքը կդառնա քո օգնականը: Եվ պատասխանը կգա, երբ դու ամենաքիչն ես սպասում. «Դե ինչ, ստացվում է՝ ոչ բոլորն են կարող հասնել իրենց ուզածին»:

– «Սեփական ճակատագիր» հասկացությունը այնքան էլ դյուրին չէ հասկանալ, այն չի տեղավորվում մեր առօրյայի շրջանակում: Ջոզեֆ Քեմփբելը օգտագործում է մեկ այլ արտահայտություն՝ «անձնական երջանկություն»: Քեմփբելը նկատի ունի հետևյալը. երբ մենք երիտասարդ ենք, ամեն ինչ գիտենք, մի բան կա այս կյանքում, որ մեզ ստիպում է լիարժեք ուրախության, իսկ մյուս բաները անհանգստացնում են մեզ: Համապատասխանաբար, սեփական ճակատագիրը հետևանք է սեփական աշխարհընկալման: Ինքնասպանություն գործող մարդիկ հետևում են ոչ թե սեփական ուղուն, այլ շարունակում են իրենց ծնողների ճանապարհը:

– «Ալքիմիկոս»-ում դուք խոսում եք «փիլիսոփայական քարի», «տիեզերքի ոգու», «կյանքի սպեղանու» մասին, Դուք կարծում եք ձեզ կհասկանա՞՞ երիտասարդությունը, որի գրպանում բջջային հեռախոս է, իսկ ականջներին՝ ականջակալ:

– Հիանալի է: Բջջային հեռախոս և համացանց: Դրա մեջ ոչ մի վատ բան չեմ տեսնում, ընդհակառակը՝ դրանք օգնում են մարդկանց հաղորդակցվելու միմյանց, իսկ ինչ վերաբերում է նշանների լեզվին, ապա դա միակ բանն է, որ օգնում է մարդկանց հաղթահարելու մշակույթների սահմաններն ու մարդկային նախապաշարումները: Ահա, օրինակ՝ երաժշտությունը կամ պարը: Մրանք նույնպես նշաններ են: Առաջին բանը, որ անում ես օտար երկրում հայտնվելիս հետևյալն է՝ գնում ես տվյալ երկրում ապրող ժողովրդի ազգային երաժշտության ձայնասկավառակը. սա ամենարդյունավետ միջոցն է փորձել հասկանալու այն երկիրը, ուր ընկել ես:

Ընդհանրապես, «հասուն կյանքը» ինձ համար դեպի անկում տանող առաջին քայլն է: Մենք չպիտի ձգտենք հասունության: Պարզապես անհրաժեշտ է մեր սրտերում պահպանել իենթ երիտասարդության սրբազան կրակը:

– Ձեր ստեղծագործությունների և Ջոան Ռոուլիգի վեպի փիլիսոփայական քարերը նո՞ւնն են:

– Այո: Ե՛վ Ջոան Ռոուլիգի վեպը, և՛ իմ ստեղծագործությունը միևնույն ալքիմիական հիմքն ունեն:

– Լսել եմ, որ պատրաստվում են «Ալքիմիկոս»-ի մոտիվներով ֆիլմ նկարահանել: Ի՞նչ կարող եք ասել այս մասին:

– Հուլիսին հանդիպելու եմ Լոուրենս Ֆիշբերնի, «Ալքիմիկոսի» պրոդյուսերների և ռեժիսորների հետ: Սա շատ նուրբ հարց է, և ես պարտավոր եմ պահել զաղտնիություն: Միայն կարող եմ ասել, որ ես չեմ ուզում խառնվել սցենարի հետ

կապված հարցերին: Ֆիլմը նկարահանելու է «Ուուրներ Բրազերգր» և մեծ էկրան կրարձրանա 2004թ.-ին:

– Դուք հավատո՞ւմ եք Աստծուն:

– Իհարկե: Ես հավատում եմ նաև, որ Աստված ինչպես ինձ, այնպես էլ իմ գործին է հավատում:

– Ի՞նչ եք Դուք մտածում ժամանակակից երիտասարդության մասին: Ի՞նչ գաղտնի գիտելիքներ կցանկանայիք կիսել նրանց հետ:

– Մի՛ վախեցեք տարբեր լինելուց: Դուք եզակի եք ու անկրկնելի: Հաղթում են միայն նրանք, ովքեր չեն վախենում:

### **Վախենալ մահից նշանակում է զուր տեղը ժամանակ վատնել**

*Аргументы И Факты կայք  
Հարցազրույցը՝ Բգոր Բզգարշևի*

Այսօր չիմանալ Կոելոյին, նույն է, թե աշխատանքի ընդունվելիս հպարտությամբ ասես, որ չես տիրապետում համակարգչի կամ էլ չես կարողանում գրել:

Կոելոյի մասին ամենադժգույն բնորոշումը տվել է ֆրանսիացի ռեժիսոր Կլոդ Լելուշը. «Եթե մեր Երկիր մոլորակում հեռավոր գալակտիկաներից հանկարծակի այլմոլորակայիններ հայտնվեն, նրանք կարող են հասկանալ մեզ՝ կարդալով միայն մեկ գիրք. Պաուլո Կոելոյի «Ալքիմիկոսը»:

Аргументы И Факты-ի թղթակիցը փորձել է հասկանալ իրեն՝ Կոելոյին, ում այցը Ռուսաստան նախատեսվում է սեպտեմբերի սկզբին:

***- Ձեր հայացքները ժամանակի ընթացքում փոխվո՞ւմ են մարդկային բնավորության զարգացմանը զուգընթաց, թե՞ մարդը, նրա բնավորությունը, մտքերն ու խթանող շարժառիթները մնում են անփոփոխ:***

- Ինձ թվում է՝ մեզնից յուրաքանչյուրի մեջ հոսում են նույն գործընթացները, ինչ հրաբխային խառնարանում. ինչ-որ տեղ՝ ներսում, կուտակվում է կրիտիկական զանգված, թեև արտաքինից նման բանը ամենևին չի երևում: Եվ մարդը հարցնում է ինքն իրեն. «Մի՞ թե հենց այսպես էլ պիտի անցնի իմ ողջ կյանքը»: Բայց հասունանում է պահը, ու սկսվում է ժայթքումը: Խելացի մարդը թույլ է տալիս, որ լավան իր ներսի խորխորատներից դուրս պրծնի ու փոխակերպվելով դառնա շրջապատող միջավայրի «բնանկար»: Հիմարը փորձում է ամեն կերպ զսպել ժայթքումը, ու այդ պահից սկսած նրա բոլոր ջանքերը ուղղվում են այն բանին, որպեսզի լավան հանկարծ դուրս չգա արտաքին մակերես: Ես, իմ կյանքի որոշակի պահից սկսած, դարձա բավականաչափ պրագմատիկ ու հասկացա, որ անհրաժեշտ է ընդունել և համբերությամբ դիմանալ տառապանքին ու ներսի հրաբխային ժայթքումներին, որպեսզի հետո ուրախանաս անճանաչելիորեն փոփոխվող բնապատկերով:

**- Ի՞նչ է մահը: «Ալքիմիկոսը» կարողա՞յց հետո այսպիսի տպավորություն է, որ դուք չեք վախենում մահվանից: Դա այդպե՞ս է:**

- Մահվանից վախենալ նշանակում է՝ զուր տեղը ժամանակ վատնել: Ինքնըստինքյան պարզ է, որ մի օր բոլորս մեռնելու ենք: Ես մահին վերաբերում եմ որպես ուղեկցի, ով միշտ նստած է իմ կողքին և պարբերաբար հարցնում է. «Ինչո՞ւ դու այդ բանը հետաձգեցիր, իսկ այս մե՞կը: Ի՞նչ է, դու չգիտե՞ս, որ ես ցանկացած պահի կարող եմ գալ քո հետևից»: Այս գիտակցությունը ինձ ամուր կապում է կյանքի հետ:

- «Ալքիմիկոսից» մեկ այլ հետաքրքիր միտք. «Միրտը օգնում է ծերերին, երեխաներին և զինվցածներին»: Ինչո՞ւ «զինվցածներին»:

- Այդպես է գրված բրազիլական ասացվածքում, այդտեղից էլ ես այդ միտքը վերցրել եմ: Համենայն դեպս, ես կարծում եմ, որ դրա իմաստը հետևյալն է՝ հարկավոր է զիտակցել անմեղության կարևորությունը, անմտությունը, կարողանալ գործել, հնազանդվել անբացատրելի հուշումներին, և դրանց շնորհիվ, վերջ ի վերջո, որքան հնարավոր է հեռու գտնվել այն կետից, ուր մեզ կուղղորդեր տրամաբանությունը: Անշուշտ կան սահմաններ և շրջանակներ, բայց քո սրտի ձայնը կարողանալ լսելը հնարավորություն կտա առաջ գնալ այն դեպքում, երբ բոլորը միաբերան կրկնում են. «Առջևում ճանապարհ չկա»: «Առջևում ճանապարհ չկան» կյանքը լցնում է համարձակությամբ ու մարտահրավերներով՝ յուրաքանչյուր պահը դարձնելով հրատապ ու կարևոր:

**- Դուք ինքներդ ձեզ համար որոշե՞լ եք՝ ինչ ասել է երջանկություն:**

- Գաղափար անգամ չունեմ՝ ինչ բան է, դա ինձ ոչ էլ հետաքրքիր է: Դե, դա կիրակի օրվա նման ինչ-որ մի բան է, երբ առջևում դեռ այնքան ժամանակ կա, և մենք կարող ենք անել ամեն ինչ, որպեսզի գոհանանք, բայց ժամերը անցնում են դանդաղ ու ծորալով, իսկ ՏՎ-ում միևնույն ծրագրերն են ու միևնույն ձանձրույթի սարսուռը... Ինձ հետաքրքիր են ոչ թե երջանկության որոնումները, այլ այն, ինչ Պոդոս առաքյալը անվանել է «լավ պայքար», այսինքն՝ պայքար երազանքների համար: Եվ այս պայքարում կան ուրախություններ ու տխրություններ, հաղթանակներ ու պարտություններ: Մա շատ ավելի հետաքրքիր երջանկություն է: 2003 թվականին Մստիսլավ Ռաստրապովիչը առաջին ռուս և աշխարհում յոթերորդ երաժիշտն էր, ում շնորհիվ էր հեղինակավոր Grammy մրցանակը. «Երաժշտի արտասովոր կարերիայի, կյանքի, ձայնագրությունների համար»: